Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ս. Ս. ԿՐՈՒՏՈՎԻՆՍԿԻ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ—1930

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ·

1· Ուղեցույց անտառային աշխատավորի · · · · · · · · · 50
2· Ս· Շադունց·—*Մեր անելիքները* (*սպառված*) · · · · · · 20
3· Հ· Փիրումյան և Մելքոնյան·—*Ինչպե՞ս ձևանում· յուղ և չվեց· պանիր պատրաստելը* (*սպառվ·*) 3
4· Փիրումյան —*Խոտաբույսերը և նրանց մշակության յուղանակները* (*սպառված*) · · · · · · · · · · · · · 10
5· Խ· Ավդալբեգյան·—*ՀՍՍՀ Հողային Ռեսուրսները, բացատրական հարց ու պատասխաններով· մասն առաջին, աշխատ· հողպատպարծության* (*սպառված*) · · · · · · 40
6· Պ· Հեքիմյան·—*Թթենու մշակությունը* (*սպառված*) · · 10
7· Պ· Հեքիմյան·—*Շերամի վարդը, նրա կերակրելն ու խնամքը* · · · · · · · · · · · · · · · · · · 10
8· Խ· Ցերիցյան·—*Կոմունատնտեսության դարձնական ձևերով, մասն առաջին* (64 *նկ·*) (*սպառված*) · · · 1 ռ· 50
9· Կ· Մելիք-Շահնազարյան·—*Մխոխտի մշակությունը* (*սպառված*) · · · · · · · · · · · · · · · · · · 20
10· Ս· Ցրիդոլին·—*Տասը պատգամ անասնապահին* · · · · 20
11· Խ· Ցերիցյան·—*Անհատական, թե՞ կոլոտ· կոմունատնտեսություն* · · · · · · · · · · · · · · · · · 10
12· Հ· Հարությունյան·—*Բաղբա՛ղ, կնքիր պայմանագիր* (*չափածո*) (*սպառված*) · · · · · · · · · · · · · · 5
13· Մ· Թումանյան·—*Շարքացանը և նրա նշանակությունը* · · · 15
14· Իս· Տեր-Ներսիսյան·—*Ինչպես մշակել խաղողի այգիները* (28 *նկարով*) (*սպառված*) · · · · · · · · · · · · 35
15· Ցերեսանիրա դեպի գյուղ·—*Անդրկովկասյան Ցերկրային Կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին· Ս· Շադունցի նախաբանով* (*սպառված*) · · · · · · · · · · · 15
16· Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Հարավային Պլենումի բանաձևերը (*սպառված*) 15
17· Ռ· Արմենյան·—*Կոչար յեղջյուրավոր անասունների ժանտախտը* (*սպառված*) · · · · · · · · · · · · · · 15
18· Հ· Ազատյան —*Գյուղատնտեսական բանվորուհի· և մեջապ· կոմունիստական շարժումը* (*սպառված*) · · · · 40
19· Ն· Խան-Ազյան·—*Ուղեցույց տարդյունավետ խաղարուծության* (*սպառված*) · · · · · · · · · · · · · · · 15
20· Ֆերդինանդով·—*Հավարուծ· և նրա պահան·* (*սպառված*) 20
21· Ա· Դանիելբեկ·—*Լավ և ոչ, քան չեր բերք* (*ապրոպիլես*) (*սպառված*) · · · · · · · · · · · · · · · · · 20
22· Կ· Կ· Մելիք-Շահնազարյան·—*Կառավհատ և կանեփը* (*սպառված*) · · · · · · · · · · · · · · · · · 20

№ 83 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 83

Ս. Ս. ԿՐՈՒՏՈՇԻՆՍԿԻ

338.1К

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

А 23260

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1151
ԻՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 3023 (բ)
ՏԻՐԱԺ 3000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանկ(բ)-ի XV համագումարի վորոշումով՝ չքավոր ու միջակ գյուղական տնտեսությունների արտադրական կոոպերացման ու կոլեկտիվացման հարցերը հանդիսանում են գյուղում մեր տարած աշխատանքի առաջնակարգ ու հիմնական խնդիրները։ Եթե սա բացատրվում է նրանով, վոր գյուղատնտեսական արտադրողականության ընդհանուր վերելքը՝ համեմատած պետականացված արդյունաբերության հետ՝ դեռ շատ է ցած։ Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը ցույց է տալիս, վոր այն ժամանակաշրջանում, յերբ արդյունաբերությունը նախապատերազմյանի համեմատությամբ կրկնակի կմեծանա, գյուղատնտեսության արտադրանքը, յեթե նա զարգանալու լինի նույն արագությամբ, ինչ վոր մինչև այժմ, նախապատերազմյան մակարդակից միայն 28–30 տոկոսով ավելի կբարձրանա։ Եթե այս վոչ թե այն պատճառով, վոր Խորհրդային իշխանությունը կամ թե գյուղացիությունն ինքը չի ցանկանում բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը, այլ նրա համար, վոր այդ արտադրողականությունը չի կարելի հասցնել հարկ յեղած բարձրության, առանց վերակառուցելու մանր գյուղացիական տնտեսությունը, վորպես խոշոր հանրայնացված տնտեսություն։

Վորպեսզի մեր արդյունաբերությունը զարգանա, անհրաժեշտ է վոր նախ՝ մեր գործարաններն ու ֆաբրիկաները արմատական վերասարքավորման յենթարկվեն և յերկրորդ՝ անհրաժեշտ է, վոր կառուցվեն արտադրության միջոցներ արտադրող բավականաչափ գործարաններ ու ֆաբրիկաներ, վորոնք առաջին հերթին գյուղատնտեսությունը գործարաններն ու ֆաբրիկաները սարքավորելու համար մեքենաներ, նաև գյուղատնտեսության համար արտադրության միջոցներ, այսինքն՝

գյուղատնտեսական մեքենաներ և ուրիշ ինվենտար: Եվ վորպեսզի մեր արդյունաբերությունն այս ուղղությամբ բարգավաճի, անհրաժեշտ է ամենից առաջ, վոր բանվոր դասակարգը լիակատար կերպով ապահովված լինի հացով, իսկ գործարաններն ու ֆաբրիկանները՝ հում նյութով ու վառելիքով (նավթ, քարածուխ, բամբակ, կաշի, կտավատ և այլն):

Ինքնընտրանքյան հասկանալի է, վոր չի կարելի չարունակել այնպես ապրել, վոր հացը չբավականացնի նույնիսկ հողագործական շրջանների գյուղացիներին: Սրա համար պետք է գյուղական տնտեսությունը լիովին ապահովել ինվենտարով և մանավանդ մեքենաներով: Այս պատճառով չքավոր ու միջակ գյուղացիության լայն խավերը շահագրգռված են արդյունաբերության, ինչպես և գյուղատնտեսության զարգացման հարցով, վորովհետև նրանց կյանքը միայն այս պայմաններում է բարելավվում:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է նույնպես ուժեղացնել մեր հացի արտահանումն արտասահման, վորպեսզի այնտեղից բավականաչափ մեքենաներ ներմուծենք: Իսկ մեծ քանակությամբ հացի արտահանումը դարձյալ կապված է գյուղական տնտեսության արտադրողականության բարձրացման հետ, վորը, ինչպես վերը նշվեց, չի կարող իրագործվել, առանց մանր, անհատական տնտեսությունների վերակառուցման՝ վորպես խոշոր հանրայնացված տնտեսություններ: Ահա թե ինչ է ասում ընկ. Ստալինն այս մասին իր զեկուցման մեջ՝ XV կուսհամագումարում:

«Ցեղքը՝ մանր և ցրված գյուղացիական տնտեսություններից՝ խոշոր և միացած տնտեսություններին անցնելն է՝ հողի հասարակական մշակման հիման վրա,—հողի կոլեկտիվ մշակմանն անցնելն է՝ նոր բարձրագույն տեխնիկայի բազայի վրա: Ցեղքը նշանակում է, վոր մանր և մանրագույն գյուղացիական տնտեսություններն աստիճանաբար, բայց անշեղ կերպով, վոչ թե ճնշման կարգով, այլ որինակ տալով ու

համոզելով՝ միացվեն ու կազմեն խոշոր տնտեսություններ՝ հողի հասարակական, ընկերական, կոլեկտիվ մշակման հիմունքի վրա, կիրառելով գյուղատնտեսական մեքենաներ ու տրակտորներ, կիրառելով հողագործության ինտենսիֆիկացիայի գիտական միջոցներ։ Այլ ելք չկա»։

XV կուս. համագումարում գյուղի կոլեկտիվացման հարցերը հրապարակ չեկան վորպես նոր խնդիրներ՝ գյուղում տարած աշխատանքի համար։ Գյուղական անհատական տնտեսությունները կոլեկտիվ տնտեսության փոխանցվելու անխուսափելիության և այս ուղղությամբ բոլոր խորհրդային և կոոպերատիվ մարմինների համապատասխան աշխատանքի անհրաժեշտության մասին հանձնարարի խոսվել և կուսակցության համաբոլոր նախորդ բոլոր համագումարներում, ինչպես նաև խորհուրդների, կոոպերատիվ և այլ համագումարներում։ Համամիութենական Կոմունիստ. Կուսակցության ծրագրում նույնպես մատնանշվում է, վոր գյուղում կուսակցության ամբողջ գործունեության վերջնական նպատակը հանդիսանում է գյուղի վերակառուցումը սոցիալիստական սկզբունքներով։ Դեռևս 1918 թ. հողաժիններին, չքավորության կոմիտեների և կոմմունաների համագումարում Վ. Ի. Լենինն ասում եր. «Աշխատանքի արտադրողականությունը մի յերկու-յերեք անգամ կբարձրանար, ժողովրդական տնտեսության համար մարդկային աշխատանքը մի յերկու-յերեք անգամ կխնայվեր, յեթե մտներ, անհատական գյուղական տնտեսությունները փոխանցվեին հասարակական տնտեսությունների»։ Համկպ(բ) XII համագումարում (1923 թ. ապրիլ) գյուղի աշխատանքի առթիվ ընդունված բանաձևի մեջ մի այսպիսի վորոշում կա. «Անհրաժեշտ է, վոր կյանքում ուժեղ կերպով կիրառվի XI համագումարի վորոշումներն այն մասին, վոր «անպայման պարտադիր և կոմմունիստների մասնակցությունն իրենց չքջանի կամ համայնքի գյուղատնտեսական կոոպերատիվներում և կոլեկտիվներում։ Գլխավորապես նրանց համար պարտադիր և առանձնակի նախաձեռնություն ցա-

ստեղծելու այս կազմակերպությունները, յեթե այդպիսիները չկան»։ Ցեվ ապա՝ 1924 թվին կուսակցության XIII համագումարը մատնանշեց, որ «Կուսակցությունն աջակցելու յե միացման նույնիսկ ամենապարզագույն ձևերին՝ թե՛ քաղաքի արդյունաբերության առարկաների գնման բնագավառում, թե՛ գյուղատնտեսական մթերքների վաճառման բնագավառում և թե՛, մանավանդ, գյուղական արտադրության այս կամ այն ելեմենտների միացման բնագավառում։ Կուսակցությունը աջակցելու յե նաև հասարակական աշխատանքի, «միասին կատարված աշխատանքի» այնպիսի պարզագույն ձևերը, որպիսին են՝ հողի միասին մշակելը, միասին խոտհարքը, կամ թեկուզ դաշտային այս կամ այն աշխատանքի ժամանակ անասուններից միասին ոգտվելը, այս կամ այն ձեռնարկը, ինչպես որինակ՝ ջրաղացը կամ խնոցին միասին ոգտագործելը,—ոգնության գալով ագրոնոմիական խորհրդով և արտադրական—տնտեսական վարկով»։ Այսպես՝ Կոմմունիստական կուսակցությունն անհրաժեշտ և համարում ամեն տեսակ միջոցներով ոժանդակել, որ կոլեկտիվացման ամենապարզագույն ձևերի միջոցով՝ գյուղական տնտեսությունն աստիճանաբար փոխանցվի խոշոր կոլեկտիվ տնտեսության։ Ցեվ, վերջապես, Կուսակցության XV համագումարը մատնանշեց, որ անհրաժեշտ և այս փոխանցումն արագացնել. անհրաժեշտ և նաև կոլեկտիվացման ամենապարզագույն ձևերին ոժանդակելուն զուգընթաց աջակցել խոշոր հանրայնացված տնտեսությունների կազմակերպության, որոնք ավելի ձեռնտու յեն, ինչպես այդ ցույց և տվել փորձը։

Մանր, անհատական տնտեսությունների հանդեպ՝ կոլեկտիվ տնտեսությունների տնտեսական առավելության հետ միասին դրված և և մի ուրիշ հարց. դա գյուղի չքավորության տնտեսական կազմակերպության խնդիրն է, որի համար կոլեկտիվ տնտեսությունները լավագույն ձևն են՝ թե՛ նրա տնտեսական բարեկեցությունը բարձրացնելու իմաստով և թե՛ նրան կուլակների

շահագործումից ազատելու տեսակետից։ Այսպիսով, կոլտնտեսությունների շարժումը հանդիսանում է նաև դասակարգային պայքարի ձևերից մեկը գյուղում։ Ընկ. Մոլոտովը Կուսակցության XV համագումարում շոշափելով այս խնդիրը՝ ասում է.

«Մեծ հասարակական տնտեսության անցնելու հարցը, դա՝ գյուղում դասակարգային պայքարի հարց է։ Սրան դեմ կկանգնի և մեծ ընդդիմադրություն ցույց կտա կուլակը։ Ունևոր, կուլակային վերնաշերտն իր մասսայով՝ չի կարող համակրել սրան, բայց մենք պետք է համակրություն գտնենք ու կգտնենք գյուղի խոշոր, դերակշռող մասսայում՝ միջակ ու չքավոր գյուղացիության մեջ և պետք է հենվենք նրանց կամավոր համաձայնության վրա՝ մի շարք միջոցներով խրախուսելով գյուղացիների համասպառասխան նախաձեռնություն»։

Ճիշտ խնայելու, գյուղական լայն մասսաներն իրենց փորձով համոզվել են կոլտնտեսությունների ոգտակարությանը, որի հետևանքով կոլտնտեսական շարժումը դառնում է գյուղի չքավոր ու միջակ խավերի մասսայական շարժում։

Կոլլեկտիվացման ուղին ու ձևերը տարբեր են, բայց հիմնական ուղին ստեղծում է գյուղատնտեսական կոոպերացիան իր ամբողջ աշխատանքով. և՛ արտադրության միջոցների ընդհանուր մասսակցության կազմակերպությամբ, և՛ մթերքների վերամշակման համար ամեն տեսակ արտադրական ձեռնարկներ կառուցելով, և՛ ամեն տեսակ պարզագույն արտադրական միություններ (մեքենայական, մելիորատիվ, տրակտորային, ատրմնարուծական և այլ ընկերություններ) կազմակերպելով։ Բացի դրանից, կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպությունն ընթանում է նաև անհատական տնտեսությունների անմիջական կերպով միացմամբ կոլտնտեսություններին, այսինքն՝ գյուղատնտեսական կոմմունաներին և հողի հասարակական մշակման գյուղատնտեսական արտելներին ու ընկերություններին։ Բոլոր դեպքերում հողոգտագործման կոլեկտիվ ձևերի զարգացումը ուժեղ կերպով նպաստում է գյուղական

տնտեսությունների մեքենայացմանը, մանավանդ այնպիսի մեքենաների կիրառմանը, ինչպիսին և, որքանակ, տրակտորը, վորի ոգտագործելը գյուղական տնտեսական տնտեսության ուժերից վեր է:

ԽՍՀՄ ԿԳԿ-ի չորրորդ նստաշրջանը կոլտնտեսություններին առաջադրել է՝ առաջիկա հինգ տարվա ընթացքում իրենց բերքատվությունը միջին հաշվով 60 տոկոսով բարձրացնել (ԽՍՀՄ ԿԳԿ-ի 1928 թ. 15 դեկտ., վորոշումը՝ բերքատվության բարձրացման միջոցների մասին):

Խորհրդային իշխանության բարձրագույն մարմնի վերոհիշյալ վորոշումը պարտավորեցնում է բոլոր կոլտնտեսություններին, վոր նրանց տնտեսական գործունեությունն ամենալարված աշխատանքով զարգանա՝ հոգուտ ցանքերի տարածության ընդլայնման և հոգուտ բարձր բերքատվության:

Կոլեկտիվ տնտեսությունների և ամեն տեսակ պարզ արտադրական միությունների աճման թափին զուգընթաց՝ գյուղացիական լայն մասսաների և մանավանդ կոլեկտիվներ և կոոպերատիվներ կազմակերպողների կողմից առաջադրվում են այդ աշխատանքները տանելու համար ամեն տեսակ ցուցմունքներ և տեղեկատու նյութեր ունենալու պահանջը:

Այս գրքույկի հետագա եջերում կարճ ու սեղմ ձևով կբացատրվեն կոլտնտեսության կազմակերպության հետ կապված հիմնական հարցերը. թե ի՛նչպես պետք է կազմակերպել աշխատանքը կոլտնտեսության մեջ, ի՛նչպես հավաքել արտադրության միջոցները, ներքին կյանքն ի՛նչպես կազմակերպել: Ապա ցույց կտրվի, թե Խորհրդային իշխանությունն ի՛նչպիսի ոգնություն և ցույց տալիս կոլտնտեսություններին, թե ի՛նչ է անում նրանց համար Կոմմունիստական կուսակցությունը և ի՛նչ պիտի անի գյուղատնտեսական կոոպերացիան: Պիտի լուսաբանվեն նաև կոլտնտեսության կազմակերպության հետ կապված մի շարք հարցեր, վորպիսիք անհրաժեշտ է, վոր իմանան վոչ միայն կոլտնտեսությունների բոլոր անդամներն և չքավոր ու միջակ ակտիվ գյուղա-

ցիությունը, վոր կոլտնտեսության անդամության մոտավոր թեկնածուն է, այլ նաև գյուղի հողային, կոոպերատիվ և այլ աշխատավորները:

ԻՆՉ ՈԳՈՒՏՆԵՐ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԽՈՇՈՐ ՀԱՆՐԱՅՆԱՑՎԱԾ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՆՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Խոշոր կոլեկտիվ տնտեսություններում ամենից առաջ՝ շենքերի վրա յեղած ծախսերի մեջ մեծ խնայողություն է արվում: Փոխանակ փոքրիկ տնակների, առանձին ամբարների, ցախաստան և այլնի, խոշոր տնտեսության մեջ շինվում են ավելի մեծ շենքեր՝ հարմարեցրած տնտեսության ամեն կարիքին: Ճիշտ է, անհատական տնտեսությունից կոլեկտիվին անցնելու անցողիկ շրջանում ավելի ծախսեր կպահանջվեն, քան յերբ այլ անհատական տնտեսությունները միանան, առանց կոլեկտիվ տնտեսության անցնելուն: Բայց այդ ծախսերը հետագայում հատուցվում են: Կոլեկտիվ տնտեսության մեջ խնայողություն է արվում նաև գյուղատնտեսական թե՛ կենդանի և թե՛ մեռյալ ինվենտարում, վորովհետև խոշոր տնտեսության մեջ ինվենտարը կարելի յե լիովին աղտագործել: Հետևապես՝ կապիտալի այն մասը, վոր ծախսվում է ինվենտարի վրա և վորը մանր անհատական տնտեսության մեջ զգալի չափով մնում է չոգտագործված, կոլեկտիվ տնտեսության մեջ չի մնում, վորպես մեռած կապիտալ, այլ գործադրվում է յեկամուտ բերող ուրիշ տնտեսական ծախսերի վրա: Որինակ՝ ձին տարվա ընթացքում մշակում է մոտ 9–13 հեկտար հող, մինչդեռ յուրաքանչյուր գյուղական տնտեսության համար ձին անհրաժեշտ է, թեկուզ նա դրա կեսի չափ հող ունենա: Նման որինակներ կարելի յե բերել և մնացած ինվենտարի մասին: Ապա՝ խոշոր տնտեսության մեջ հնարավորություն կա ձեռք բերելու թանկարժեք մեքենաներ, ինչպես որինակ՝ տրակտոր, կալսիչ, հնձելու մեքենա և ուրիշ ինվենտար, վորը փոքր տարածության մեջ անգործածելի յե և, բացի այդ, տրակ-

տարն ամառվա ընթացքում 110 հեկտարից ավելի հող է հերկում, հետևապես նա բոլորովին ձեռնտու չի փոքր տնտեսության համար։ Ամեն տեսակ ինվենտարի նորոգումը, կամ, ինչպես ասում են, նրա ամորտիզացիան խոշոր տնտեսության մեջ նույնպես ավելի էժան և նրատում, քան փոքր տնտեսության մեջ, վորովհետև դոբծիք, դարբնոցի հնոց և այլ ինվենտար ունենալը միատեսակ պետք է թե՛ մեկ արորի և մեկ դուքանի համար և թե՛ 100 դուքանի ու այլ մեքենաների համար։

Կոլլեկտիվ տնտեսության մյուս ոգուտներից է՝ մեքենայացման հիման վրա՝ հողի լավագույն մշակումը, ապա, ցեղային անասուններ բուծելու հնարավորությունը, զանազան տեսակավոր սերմեր ցանելու հնարավորությունը, տեխնիկական կուլտուրաներ (բամբակ, կարտոֆիլ, կտավատ և այլն) զարգացնելը։ Այս բոլորը միասին վերցրած՝ հնարավորություն են տալիս ավելի յեկամուտ ստանալու, քան անհատական տնտեսություններում։

Այնուհետև, կոլլեկտիվ տնտեսության մեջ հնարավոր է կարճ բանվորական որ ունենալով՝ բանվորական ուժն ավելի լրիվ ոգտագործել, այլ կերպ ասած՝ կոլլեկտիվ տնտեսությունների արտադրողականությունն ավելի բարձր է, վորպես խոշոր տնտեսության, քան անհատական տնտեսության արտադրողականությունը։ Սա առաջ է գալիս նախ՝ կոլլեկտիվ տնտեսությունների մեքենայացումից և յերկրորդ՝ նրանից, վոր խոշոր տընտեսության մեջ յուրաքանչյուր աշխատավոր մասնագիտանում է և գտնվում է իր տեղում, չանցնելով մի աշխատանքից մյուսին, ինչպես այդ լինում է անհատական տնտեսության մեջ։ Վերջապես, կոլլեկտիվ տնտեսությունները հնարավորություն ունեն գյուղատնտեսական մթերքները վերամշակելու համար ձեռնարկումներ հիմնելու, իսկ մենք գիտենք, վոր վերամշակված մթերքներն ավելի հեշտ ու ձեռնտու յե ծախելը։

Այս ամբողջ բացատրությունից հետևում է, վոր խոշոր հանրայնացված տնտեսություններում արտա-

գրության միջոցների պակաս ծախսով ավելի շատ մրցերքներ են ստանում (ավելի մեծ բերք, կաթի ավելի մեծ կիթ և այլն), արտադրանքի վորակն ավելի բարձր է, և կապիտալի կուտակումը, շնորհիվ մեծ յեկամուտի, ավելի արագ է կատարվում, քան անհատական տնտեսություններում: Սրա հետ կապված՝ խոշոր կոլեկտիվ տնտեսություններում նրանց անդամների համար ստեղծվում են կյանքի լավագույն պայմաններ, բնակարանի, սննդի, հագուստի, յերեխաների լավագույն դաստիարակության, անդամների կուլտուրական մակարդակի բարձրացման և այլ տեսակետներից:

Բացի ամեն տեսակ տնտեսական ոգուտներից, կոլեկտիվ տնտեսություններում հանրայնացված կապիտալների աճման և արտադրության միջոցների անհատական ոգտագործումից աստիճանաբար հասարակականին փոխանցվելու հետ՝ վերացվում են գյուղացիության չքավոր խավերի շահագործման հնարավորությունները:

Սրանք են կոլեկտիվ տնտեսությունների ամենագլխավոր ոգուտներն ու առավելություններն անհատական տնտեսությունների հանդեպ: Այս բոլոր ոգուտները ակնհայտ են յուրաքանչյուր տնտեսապես ամբացող կոլտնտեսության մեջ: Դրա համար էլ ամեն գյուղացի, վոր հետաքրքրվում է կոլեկտիվ տնտեսությամբ, նրա ձեռնտվությամբ ու առավելություններով, պետք է գնա իր շրջանի լավագույն կոլտնտեսություններից մեկը, ուր նա կկարողանա գործնականում այս բոլորի մեջ համոզվել, իսկ ցանկության դեպքում նաև խորհրդակցել, թե անհատական տնտեսությունից ի՞նչպես ավելի լավ կլիներ անցնել կոլեկտիվ տնտեսության:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոլտնտեսություններում յեղած հաջողությունների ու թերությունների ճիշտ գնահատական տալու համար անհրաժեշտ է հիշել, վոր կոլտնտեսություններում իրագործվում են գլխավորապես գյուղացիության

չքավոր, բատրակ ու միջակ խավերը, վորոնք կարիք ունին ինվենտարի և արտադրության այլ միջոցների։ Այս պատճառով էլ կոլտնտեսությունների դրությունն առաջին տարիներում հաճախակի շատ ծանր և լինում։ Սակայն չեն դեպքեր, յերբ մեր կոլտնտեսություններն առաջին տարիներում նույնիսկ շենքեր չեն ունենում և պատահում է, վոր մի վորևե տեղ մարդիկ մի քանի տարի հյուղերում են ապրում, մինչև վոր տնտեսությունն ուժեղանում է։ Բայց հետո ուժեղացած կոլտնտեսությունն այնպիսի շենքեր և կառուցում, վորոնց մասին նրանց անդամները յերազել անգամ չեյին կարող, յեթե մնային վորպես անհատական տնտեսություններ։

Բանդյուզտեսչության, դիտական–հետազոտական ինստիտուտների և ուրիշ դիտական հիմնարկների կատարած հետազոտությունները ցույց են տալիս, վոր առանձին չքավոր ու միջակ տնտեսության արտադրողականությունը դեռ ցած է, իսկ մթերքների ինքնարժեքը՝ չուկայի գներից էլ վոչ պակաս։ Իսկ խոշոր տնտեսություններում՝ խորհրդային տնտեսությունում և կոլլեկտիվ տնտեսությունում մթերքների քանակը, նրանց ինքնարժեքն ու վորակն այնպես են, վոր հնարավորություն են տալիս վոչ միայն լիովին բավարարելու անդամների կարիքները տնտեսության ներսում, այլև մեծ քանակությամբ մթերքներ չուկա հանելու։

Կոլլեկտիվ տնտեսություններում կաթնատու և ծիկան անասունների ցեղական բուծարանները ավելի յեն զարգանում, քան անհատական տնտեսություններում. ավելի յեն բազմացվում նաև տեսակավոր սերմեր և այլն։ Այս հանգամանքն ապահովում է կոլտնտեսությունների վերածում կուլտուրական ոջախների, վորոնք վոչ միայն իրենք են աճում, այլ և աղդում են իրենց շրջապատող անհատական տնտեսությունների տնտեսական ու կուլտուրական աճման ու արտադրական իմպերացման վրա։

Թեև ճիշտ է, վոր նոր կազմակերպված կոլտնտեսությունները, մեծ մասամբ, վոչ միայն տպրանքային տնտեսություններ չեն, այլ՝ իրենց մթերքները

չուկայում չեն վաճառում, այլ հաղիվհազ բավարարում են իրենց անդամների կարիքները, մանավանդ, յուրաքանչյուրս կազմակերպվել են չքավոր գյուղացիներից։ Եվ միայն մի քանի տարիների աշխատանքից հետո կոլեկտիվ տնտեսությունը դառնում է հասույթաբեր, ապրանքային տնտեսություն։

Կոլտնտեսություններում բերքը, վորպես կանոն, 20–30 և ավելի տոկոսով բարձր է լինում, քան անհատական տնտեսության մեջ։ Կոլտնտեսությունների 30–40 տոկոսը ցանում են տեսակավոր սերմեր։ Կոլտնտեսություններում տեխնիկական կուլտուրաներն ու անասունների կերն ավելի հաջող են զարգանում, քան անհատական տնտեսություններում։ ԽՍՀՄ մեջ ներկայումս 40 հազարից ավելի կոլտնտեսություններ կան (գյուղատնտեսական կոմունաներ, գյուղատնտեսական արտելներ և հողի հասարակական մշակման ընկերություններ) և նույնքան ել պարզ արտադրական միություններ (մեքենայական, մելիորատիվ, տրակտորային և այլն)։ Կոպիտ հաշվով վերցրած՝ Միության կոլտնտեսությունները 1928 թ. ընթացքում չուկա յեն հանել 450·000 տոննից ավելի հացամթերք։ Հացի ընդհանուր ապրանքային արտադրանքի հետ համեմատած՝ սա շատ փոքր տոկոս է, բայց նախորդ տարիների համեմատությամբ՝ սա արդեն խոշոր նվաճում է։

Մասերով կոլտնտեսությունների մասին, պետք է մատնանշել նաև այն թերությունները, վոր ունեն նրանք և վորը պետք է վերացնել ամենորյա գործնական աշխատանքի ընթացքում։

Ամենից առաջ մեր կոլտնտեսությունները, մեծ մասամբ, դեռևս իսկական խոշոր տնտեսություններ չեն։

Կոլտնտեսությունների անդամների մեջ ներքին հարաբերությունները դեռ չեն կարգավորված հաճախ վեճեր են պատահում նրանց մեջ։ Նաև խիստ հոսուն և կոլտնտեսությունների անդամների կազմը և այլն։

Ռացիոնալիզացված ու մշակված չեն աշխատանքի կազմակերպության հարցերը և նրա բարձր արտադրո-

գականությունն ապահովող աշխատանքի վարձատրության յեղանակները։

Տնտեսական պլան կազմելը, հաշվապահությունը, հաշվառումը դեռ ևս թույլ են կիրառվում կոլտնտեսություններում։

Կոլտնտեսությունների վարկավորման, նրանց արտադրության միջոցներ հայթայթելու և նրանց արտադրանքի վաճառման մեջ պլանայնությունն անբավարար է։

Կոլտնտեսություններում ագրոնոմիական աշխատանքն ու հողաշինարարությունը թույլ է։

Կոլտնտեսական զարգացման ամբողջական շարժման մեջ դեռ բացակայում է հարկ յեղած կապը, ինչպես նաև այն բացակայում է առանձին շրջանի՝ առանձին կոլտնտեսության և գյուղատնտեսության պլանային, գյուղատնտեսական կոոպերացիայի ու ժողովրդական տնտեսության ընդհանուր զարգացման մեջ։ Այս պատճառով կոլտնտեսության շինարարության մեջ տնայնագործությունը մեծ տեղ է բռնում։

Դեռևս չի կարգավորված կոլտնտեսությունների համար կազմակերպիչ ու ղեկավարող կադր նախապատրաստելու հարցը և այլն։ Հաճախ նկատվում են անտրնտեսավարություն և այլ թերություններ։ Բայց այս բոլոր թերությունները հետզհետե վերացվում են և բոլորովին չեն նվազեցնում կոլտնտեսությունների նշանակությունը։

I. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Համաձայն այն կանոնադրության, որը վերաբերում է գյուղատնտեսական կոոպերացիային, որի տեսակներից մեկն էլ հանդիսանում է կոլեկտիվ տնտեսությունը, կոլտնտեսության անդամ կարող են լինել 16 տ. հասած բոլոր քաղաքացիները, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ կամ նրա հետ առնչություն ունեցող որևէ համանման աշխատանքով: Կոլտնտեսության անդամ չեն կարող լինել բոլոր կուլակ տնտեսությունները, խորհրդային սահմանադրությամբ ձայնից զրկվածները: Գոյություն ունեցող գյուղատնտեսական կոլեկտիվները մտնելու կարգը, նորերի կազմակերպելը և կոլեկտիվի տեսակի ընտրությունը հիմնված է կամավոր համաձայնության վրա: Այս տեսակետից վոչ Կոմմունիստական կուսակցությունը և վոչ էլ Խորհրդային իշխանությունը որևէ ճնշում չեն գործադրում:

Կոլտնտեսության ձևն ընտրելիս՝ պետք է նկատի առնել, որը գյուղացիության չքավոր ու միջակ մասսաների համար, որոնք դարերով վարժվել են մենքը, անհատական տնտեսության մեջ ապրել, կոլտնտեսություններին անցնելը չափազանց դժվար է լինում:

Կոլեկտիվ տնտեսություն կազմակերպելու համար պահանջվում է առնվազն 15 հիմնադիր անդամ՝ գյուղատնտեսական կոմմունաների, գյուղատնտեսական արտելների և հողի մշակման ընկերությունների համար և ավելի մեծ թվով անդամներ՝ ուրիշ նախնական կոոպերատիվների համար: Չնայած որ կոլտնտեսություն կազմակերպելու համար բավական են

և 15 հիմնական անդամ, այնուամենայնիվ ցանկալի չէ, որ նրանք ավելի (100–150 լինեն, որովհետև, ինչպես վերը հիշվեց, որքան մեծ է տնտեսությունը, այնքան նա ավելի ձեռնտու է, բայց որ ոչ մի որդան այս տեսակետից՝ ճնշում չպետք է գործադրի:

Հետևյալ հարցն է լինելու՝ թե կոլեկտիվ տնտեսության մեջ միանում են արդյոք ծխե՞րը, թե՝ նրանց առանձին անդամները: Կոլտնտեսություն կազմակերպելիս պիտի այնպիսի գիծ տանել, որ միացվեն որոշ թե ծխերը, այլ ծխի առանձին անդամները: Այս կարգն ավելի խիստ պիտի կիրառել գյուղատնտեսական կոմմունաներում և գյուղատնտեսական արտելներում: Այս կարգից կարելի է շեղվել հողի հասարակական ոգտագործման ընկերություններում, որպես փոխանցման ավելի պարզ ձևեր: Իսկ ինչ վերաբերում է ընտանիքի անաշխատունակ անդամներին (ցերեխաներ, ծերեր, հաշմանդամներ), ապա վերջիններս, իրենց խնամող անդամների՝ կոլեկտիվի մեջ մտնելիս՝ մեխանիկորեն մրցում են կոլտնտեսության մեջ:

Մի քանի դեպքերում փորձեր են արվում կոլտնտեսություններում չքավորներին միացնելու չքավորների հետ և միջակներին՝ միջակների հետ: Սա ճիշտ չի և չի բղխում ոչ տնտեսական և ոչ էլ ընդհանուր քաղաքական նպատակահարմարությունից: Ընդհակառակն՝ այս կարգը կոլտնտեսական շարժման ներսում, գյուղացիության հիմնական խմբակների մեջ պատակում և մաղնում: Կոլտնտեսության առանձին անդամների մեջ տնտեսական անհավասարությունը վերացնելու համար այլ միջոցներ կան, որոնց մասին կխոսվի հետագայում: Չպետք է մոռանալ, որ կոլտնտեսության անդամ լինելը այս կամ այն գյուղացու համար ժամանակավոր մի գործ չի, այլ դա սկիզբն է բոլոր անհատական գյուղական տնտեսությունները կոլտնտեսությունների վերածելու: Աճող սերունդը, որ գոյություն ունեցող կոլտնտեսություններում հասնում է 16 տարեկան հասակի, մեխանիկորեն համարվում է կոլտնտեսության անդամ և նրանց համար կոլտնտեսության միջոցներից մուծվում են մուտքի և անդամության վճարները: Փայի և մուտքի վճարները

մուծելուց ազատվում են այն կոմունաները, որոնց մեջ արտադրության բոլոր միջոցները և ամբողջ գույքը լիովին համայնացված են և հանդիսանում են վոչ թե առանձին անդամների, այլ կոլտնտեսության սեփականություն։

Կոլտնտեսություններում նոր անդամների ընդունելությունը և վտարումը յուրաքանչյուր առանձին դեպքում կատարվում է ավյալ կոլեկտիվի ընդհանուր ժողովում։ Ուրիշ վոչ մի որդան չի կարող կոլտնտեսության անդամներին նշանակել ու հեռացնել։ Վերջին դեպքում այս իրավունքը վերապահված է միայն համապատասխան դատաստանական որգաններին։

Կոլտնտեսությունները լիկվիդացիայի յենթարկելու իրավունքը պատկանում է շրջանային (окружной) և նահանգային գործադիր կոմիտեների նախագահությանը. համապատասխան հողային որգանների առաջարկով հողորդաններին պետք է ներկայացվի այս առթիվ կոլտնտեսությունների միության պարտադիր յեզրակացությունը, իսկ որտեղ չկա այդ միությունը, գյուղատնտեսական կոոպերացիան և փոխարինում նրան։ Ուրիշ վոչ մի որդան իրավունք չունի կոլտնտեսությունները լիկվիդացիայի յենթարկելու։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ

Կոլտնտեսություն մտնող ամեն վոք պետք է մուծի մուտքի վճար, որը դնում է կազմակերպչական ծախսերի վրա և որի մնացորդը հատկացվում է անբաժանելի կապիտալին, հետևապես չի վերադարձվում։ Մուտքի վճարների չափը վորոշում է կոլտնտեսության կազմակերպչական խմբակը կամ ընդհանուր ժողովը և մտցվում է կանոնադրության մեջ։ Սովորաբար մուտքի վճարը տարբեր է լինում.—1 ռուբլուց սկսած մինչև մի քանի ռուբլի։ Լավա վորոշվում է անդամավճարը (փայը)։ Շատ կոլտնտեսություններում անդամավճարները (փայերը) վորոշում են 50–500 ռուբլու սահմաններում, իսկ դրանից բացի՝ մուծվում է նաև անդամների ունեցած գույքը վորպես ավանդ, որի վրա յուրաքանչյուր տնտեսական տարվա վերջում կոլտնտեսության

ՀԱՅԿ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ
ԿՈՆՏՐՈԼՅՈՐ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿՆԴԻՄԻՆ

յեկամուտներից ավելացվում է վորոշ տոկոս։ Այս պայմաններում, ի հարկե, կոլտնտեսությունների անդամների նյութական մասնակցությունը միանգամայն անբավարար է, ուրեմն և կոլտնտեսության զարգացման խնդրում նրանց ունեցած շահագրգռվածությունը թույլ է։ Բացի այդ, այս պայմաններում ավելի պակաս շահավոր դրության մեջ են գտնվում չքավոր և ընտանիքում շատ անաշխատունակներ ունեցող անդամները, վորովհետև յեկամուտների զգալի մասը գնում է վոչ թե աշխատանքը մարմնավորելու համար, այլ ավելացվում է ավանդների տոկոսների վրա։ Այստեղից պարզ է, վոր միանգամայն նպատակահարմար ու ճեռնտու յե համարվում անդամավճարների բարձրացումը։ Բայց այս բարձրացումը պետք է լարտսվի միայն գյուղացիության չքավոր ու միջակ խմբակների համար մատչելի սահմաններում։ Անդամավճարների մեծությունը յուրաքանչյուր շրջանում և յուրաքանչյուր ազգային հանրապետության մեջ, նաև կոլտնտեսությունների առանձին ճեվերում կարող է լինել տարբեր, բայց պիտի լինի բավարար չափով, վորպեսզի կոլտնտեսության մեջ միացած անդամները կարողանան հանրայնացված տնտեսությունը վարել։ Բոլոր տեսակի կոլտնտեսություններում անդամավճարը գանձվում է վոչ թե ընտանիքից, ինչպես ասված եր վերևում, այլ յերկու սեռին պատկանող 16 տ. լրացրած բոլոր անդամներից։ Բոլոր այս դեպքերում պետք է ապահովել կոլտնտեսության մեջ կազմակերպված բաստրակ ու չքավոր գյուղացիության շահերը—ընդհանուր ժողովի վորոշումով—թույլ տալով, վոր նրանք իրենց անդամավճարները մուծեն մաս-մաս։ Պետք է ոգտագործել չքավորության կոոպերացման ու կոլլեկտիվացման ֆոնդերը և այլն, չքավորներին վարկավորել՝ անդամավճարները մուծելու նպատակով։ Փոխադարձ համաձայնությամբ կարելի յե անդամավճարները մուծել վոչ միայն փողով, այլև ամեն տեսակ գույքով (ձիկան և կթի անասուն, գյուղատնտեսական մեքենաներ և. այլ ինվենտար, արհեստանոցներ, շենքեր և այլն)։ Պետք է սահմանել այնպիսի կարգ, վոր ամեն վոք, վոր կոլտնտ-

տեսության մեջ և մոնում, գրավոր պարտավորագիրը տա այն մասին, որ նա կոլտնտեսության գործերի նը-կատմամբ նյութական պատասխանատվություն է կրում իրեն պատկանող, սակայն չհանրայնացված գույքով, այն չափով, որպիսին որոշել է կոլտնտեսությունների ընդհանուր ժողովը բոլոր անդամների համար:

Սա կարևոր հանգամանք է, և այդ դեպքում կոլլեկտիվի յուրաքանչյուր անդամ տնտեսապես շահագրգռված կլինի հանրայնացված գույքի խնայողության ու մեծանալու վերաբերմամբ:

Ընդհանրապես, ինչպես գիտենք, կոլտնտեսությունները կազմում են հիմնական և շրջանառու միջոցների պակասություն: Այս պատճառով պետք է խրախուսել, որ կոլտնտեսության այն անդամները, որոնք մուծված անդամավճարներից բացի գույքեր ունեն, նաև ավանդներ մուծեն, իսկ որպեսզի նրանք դրանում շահագրգռված լինեն, անհրաժեշտ է, որ այդ ավանդներին տրվեն որոշ տոկոս՝ կոլտնտեսությունների յեկամուտներից: Այս տոկոսի չափը գյուղատնտեսական ընկերություններում դրված ավանդների տոկոսից բարձր չպիտի լինի: Բացի դրանցից, յուրաքանչյուր կոլտնտեսություն պիտի ձգտի հանրայնացնելու իր առանձին անդամներին պատկանող, չհանրայնացված արտադրության միջոցները, լինի դա ինվենտար, շենք կամ այլ գույք: Կազմակերպվող կոլտնտեսություններում, կապիտալների կուտակման մատնանշված կարգը լավ է նրանով, որ նախ նպաստում է կոլտնտեսություններում ավելի շատ կապիտալ ներդրավելու և յերկրորդ՝ աստիճանաբար հարթում է կոլտնտեսության առանձին անդամների գույքային անհավասարությունը:

Այսպիսով՝ կոլտնտեսություններում միացած գյուղացիությունից հանրայնացված կապիտալների համար միջոցներ մրցնում են հետևյալ ձևերով. 1. մուտքի վճարներ, 2. անդամավճարներ (փայավճարներ), 3. ավանդներ, 4. վարկ:

Հետևյալ սխեման տալիս է դրա պատկերացումը։ (Տե՛ս գերեզ 22)։ Այս որինակների սխեմայից երևում է, վոր յեթե անդամավճարները (փայերը) յուրաքանչյուր անդամի համար սահմանվի 200 ռ. և մուտքի վճարը՝ 2 ռուբլի, ապա սա կկազմի 2,242 ռուբ.։ Ավանդներից՝ 2,394 ռուբլի։ Հետևապես, նույնիսկ այսպիսի բարձր անդամավճար մուծելու դեպքում էլ անհրաժեշտ կլինի ավանդներ և կապիտալվարձ ստանալու։ Իսկ մենք գիտենք, վոր փայավճարները (անդամավճարները կոլտնտեսությունների յեկամուտներից չեն վճարվում, իսկ մուծումները ու կապիտալվարձը վճարվում են։ Հետևապես, անհրաժեշտություն է զգացվում բարձրացնել զգայություն ունեցող փայավճարները (անդամավճարները)։ Հանրայնացված տնտեսության համար այդ շահավետ է նույնպես, ինչպես և չքավորության համար, վորովհետև այս դեպքում կոլլեկտիվ տնտեսության յեկամուտներից քիչ գումար կվճարվի հանրայնացված տնտեսության մեջ, վորպես ավանդ դրված կապիտալներից և միաժամանակ աշխատավարձը կբարձրացվի։

Շատ կոլտնտեսություններ ստիպված են զարգացնելով իրենց այն ինվենտարն ու մեքենաները, այլև շենքերը և այլն, վորպիսի՛ կոլտնտեսության առանձին անդամները ավել են կոլտնտեսության՝ վորպես ավանդ —կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ յետ են գնում։ Այս կարգը պետք է պահպանել։

Մի քանի (ճիշտ է՝ վոչ շատ) կոլտնտեսություններում բոլոր անդամների համար միատեսակ անդամավճար (փայ) չի սահմանվում, այլ այդպիսին սահմանվում է նկատի առնելով կոլտնտեսության մեջ մտնող անդամների տնտեսական ապահովությունը։ Այսպես, որինակ՝ յեթե անդամի համար փայավճարի նվազագույն նորման սահմանված է 100 ռուբլի, ապա այն անդամագրվողների համար, վորոնք մեծ կապիտալ ունեն, անդամավճարը սահմանվում է 200 և 300 ռուբլի։ Սակայն, թե՛ կոլտնտեսությունների վորոշումներից և թե՛ գյուղատնտեսական կոոպերացիայի մասին յեղած կանոնադրությամբ (որենքով) մեծ փայավճար մուծող ան-

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼՈՒՄ ՄԻԱՑԱԾ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	Ամենամյա վճարում	Ամենամյա վճարում դեպքերի համար	Ամենամյա վճարում (մոցիամոցի)	Ամենամյա վճարում (ցիկլոնիզատորների) կոնցասա և ֆրանսիայի համար	Ամենամյա գումարներ, որոնք կոնցասոյի գանձարանում	Ամենամյա վճարում
Մացակ Դավթյան	77 ռ.	2 ռ.	200 ռ.	50 ռ.	75 ռ.	—
Վազգեն Ղարիբյան	52 »	2 »	200 »	150 »	50 »	—
Թաթ. Կարապետյան	150 »	2 »	200 »	52 »	—	—
Յովակ Խաչատրյան	800 »	2 »	200 »	—	—	300 ռ.
Վարդան Պետրոսյան	1000 »	2 »	200 »	—	—	400 »
Հակոբ Ալիխանյան	100 »	2 »	200 »	12 »	90 »	—
Պետրոս Վոսկանյան	1400 »	2 »	200 »	—	—	698 »
Միխակ Ստեփանյան	1200 »	2 »	200 »	—	—	598 »
Աս. Շահնազարյան	400 »	2 »	200 »	—	—	198 »
Գրիգոր Պողոսյան	600 »	2 »	200 »	—	—	300 »
Պողոս Ավետիսյան	—	2 »	200 »	102 »	100 »	—
Գումար	5779 ռ.	22 ռ.	2200 ռ.	316 ռ.	315 ռ.	2394 ռ.

գումներն ել մյուսներին նման ոգտվում են մեկ վճռական ձայնից և յեկամուտների բաշխման ժամանակ ու աշխատավարձ ստանալիս՝ փայերն ի նկատի չեն ունենվում։ Այս կարգի լայն տարածումը պիտի խրախուսել։

Կարեվորն այն է սակայն, վոր կոլտնտեսության մեջ կապիտալներ մուծելիս՝ պաշտպանվեն բատրակի և չքավորի շահերը և միաժամանակ միջակին ել շահագրգռված լինի, վոր կոլտնտեսություն մտնելիս իրեն պատկանող կապիտալներն ստանձնաբար հանձնի հանրայնացված տնտեսության

Կոլլեկտիվ տնտեսությունների զարգացման և, մասնավանդ, հանրայնացման ուճման գործընթացը, ինչպես անբաժան կապիտալների նույնպես և անդամավճարների նշանակությունը հետզհետե նվազելու յե և հետագայում կարեվոր նշանակություն են ստանալու արտադրության միջոցների վերանորոգումը, հետևապես և նրանց վարակի բարձրացումը։ Կոլլեկտիվ, հանրայնացված տնտեսության մեջ անդամների մտցրած ինվենտարն ու շենքերն իրենց հատկությամբ ու մեծությամբ հարմարեցրված են մանր գյուղացիական տնտեսության և քիչ են պիտանի խոշոր հանրայնացված տնտեսության համար։ Այս իսկ պատճառով կոլտնտեսության տնտեսությունն ուճման, նրա ամրացման և հանրայնացրած միջոցների ուճման ընթացքում այդ ինվենտարը հետզհետե պիտի վերանորոգել ու հարմարեցնել խոշոր տնտեսության պահանջներին։ Այլ կերպ ասած՝ պետք է կատարել այնպիսի շենքեր, վոր հարմար լինեն խոշոր տնտեսության համար։ Նույն կերպ և մանր ինվենտարը պետք է աստիճանաբար փոխարինել ամեն տեսակ մեքենաներով։

Վորպեսզի կոլտնտեսությունները ավելի կայուն լինեն, վորպեսզի նրանց անդամները այդ տնտեսության զարգացմամբ ավելի շահագրգռված լինեն և, վոր գլխավորն է, վորպեսզի կապիտալների կուտակման այնպիսի ձևեր ստեղծվեն, վորոնք ապահովեն կոլտնտեսությունների փոխանցումն իսկապես խոշոր հանրայնացված տնտեսության,—անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կոլլեկտիվ տնտեսության մեջ կազմվեն, այսպես կոչված, անբաժանելի կապիտալներ։ Անբաժանելի

կառավարությունների մեջ ՍՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 16 մարտի 1927 թվի վորոշման համաձայն, պետք է ամենից առաջ մացնել կոլտնտեսությանը հանձնած պետական ամբողջ դույքը։ Բացի դրանից, բոլոր կոլտնտեսություններում, ինչպես և գյուղատնտեսական կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում և հողի հասարակական ոգտագործման ընկերություններում տընտեսության դուռ յեկամուտներից յուրաքանչյուր տարի պետք է վորոշ տոկոս հատկացնել անբաժանելի կապիտալներին։ Անբաժանելի կապիտալը դործածվում է տնտեսության բոլոր դործարքների համար, բայց գլխավորապես նա գործ է ածվում, վորպես հիմնական կապիտալ։ Կոլտնտեսությունից հեռացող անդամներին անբաժանելի կապիտալներից մասնատրում չի կատարվում։ Կոլտնտեսության լիկվիդացիայի ժամանակ նույնպես անբաժանելի կապիտալը չի բաժանվում անդամների մեջ, այլ հանձնվում է կամ տվյալ տեղում նոր կազմակերպվող կոլտնտեսության կամ կոլտնտեսությունների միությունների և սեկցիաների կից կազմակերպված կոլեկտիվ հողագործության զարկ տվող ֆոնդերին։ Այս ֆոնդերը պետք է ծախսվեն, գլխավորապես, չքավորության վերկավորման՝ կոլտնտեսությունների անդամավճարները մուծելու և այլ նպատակների համար։ Պետք է աշխատել, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսության ներսում անբաժանելի կապիտալների համար մասնատրված տարեկան դումարներից կոլլեկտիվ հողագործության զարդացման համար մի վորոշ մաս հատկացվի և հանձնվի վերոհիշյալ ֆոնդին։ Յուրաքանչյուր կոլտնտեսության կանոնադրության մեջ անբաժանելի կապիտալներ ստեղծելու մասին պետք է համապատասխան կետ մացնել։

Յերբ կոլտնտեսությունից նրա անդամները կամավոր կամ հարկադրված հեռանում են, նրանց ամբողջությամբ վերադարձվում են իրենց ժամկետային կամ անժամկետ մուծած ավանդները։ Եվ յեթե կոլտնտեսությունը վնաս չի տրել՝ նաև անդամավճարները։ Իսկ յեթե տնտեսությունն այնպիսի վնասներ է տրել, վորոնք յեկամուտներով չեն ծածկվում, անդամավճարներն ամ-

բողջությամբ կամ մասամբ հատկացվում են այդ վնասների ծածկելուն և չեն վերադարձվում անդամներին։ Ինչ վերաբերում է շահին, ապա նրա մի մասը նույնպես կարող է տրվել հեռացող անդամներին, բայց այն չափով, որ չգերազանցի այն գումարին, որը կարող էր ստացվել անդամավճարից որպես շահ, յեթե հեռացողն այդ տարվա ընթացքում վարեր անհատական տնտեսություն։ Իսկ այն ամբողջ շահը, որ ստանում է կոլտնտեսությունը, շնորհիվ խոշոր տնտեսության առավելությունների և որենքով դյուղատնտեսական կոլեկտիվներին տրված ամեն տեսակ արտոնությունների, որինակ՝ վարկի, հարկի, մեքենաներ հայթայթելու և այլ խնդիրներում,—պետք է մնա կոլտնտեսության մեջ, որպես անբաժանելի կապիտալ։

Կոլտնտեսություններ կազմակերպելիս պետք է, որպես կանոն, հողամասերը տրվեն մի տեղում, որպեսզի կոլտնտեսությունները կարողանան կանոնավոր սերմնաշրջանառություն կատարել և կիրառել ուրիշ անհրաժեշտ միջոցներ, հետևապես և հաջող կերպով զարգանալ։

Կոլտնտեսություններից հաճախակի հող ունենալը, որ հետևանք է նրանց կազմի հոսունության, արգելք է հանդիսանում նրանց կանոնավոր զարգացմանը։ Այս բանը վերացնելու համար անհրաժեշտ է հողաբաշխման մեջ ավելի հիմնական կայունություն մտցնել և ըստ հնարավորին խուսափել հեռացողների համար հող ունենալուց։ Սրա համար էլ առաջին հերթին պետք է հողամասերի փոխանակում կատարել նոր մտնող անդամների հետ և կամ թե՝ դուրս յեկող անդամներին առաջին հերթին հող տալ պահեստահողի ֆոնդերից։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

Կոլտնտեսությունների շինարարության պրակտիկայում դոյություն ունեն աշխատանքի կազմակերպման ու վարձատրության զանազան յեղանակներ։ Հողի հա-

տարբերական ոգտագործման ընկերություններում տարբերաբար խոսք չի կարող լինել աշխատանքի կազմակերպության մասին: Այստեղ պայմանավորվում են, թե հանրայնացված հողամասում յուրաքանչյուր ծուխ աշխատանքի համար ինչքան բանվորական ուժ և տակիա և համապատասխան դրան, տարվա վերջում, բաժանում են մնացորդության արդյունքները: Արտելներում և կոմունաներում ուրիշ կարգ կա, որչափով որ արտելներն ու կոմունաները հանդիսանում են միասնական խոշոր մնացորդություն և ոչ թե անհատական մնացորդությունների մի խմբակ, որոնք միացած են այս կամ այն մնացորդային աշխատանքը միասին կատարելու համար:

Մեծ կոլեկտիվներում բանվորական ուժը տարբերաբար բաշխվում է մնացորդության առանձին ճյուղերի մեջ: Որինակ՝ մի որոշ խմբակ գնում է դաշտային աշխատանքների, աշխատավորների մի մասը միշտական աշխատում է գոմում, բանջարանոցում, այգում կամ տրնտեսության այլ ճյուղերում: Դրա շնորհիվ առաջանում է բանվորական ուժի մասնագիտացում, որոշ աշխատանքի համար ավելի մեծ հմտություն է ձեռք բերվում, իսկ սրա հետևանքով էլ տարվող աշխատանքն ավելի արդյունավետ է լինում, քան այն մնացորդություններում, որտեղ բանվորական ուժը մի աշխատանքից մյուսն է տեղափոխվում:

Կոլմնացորդություններում աշխատանքի ավելի ոգտակար, գիտական կազմակերպության մասին առայժմ չենք խոսում, որովհետև այս խնդրով մենք դեռ չենք զբաղվել: Այս հարցով պետք է զբաղվեն դյուղատնտեսական համապատասխան կրթական հիմնարկները ու փորձնական կայանները, իսկ մենք, գործնական աշխատանքում, պետք է ձգտենք, որ կոլմնացորդության մեջ բանվորական ուժն ավելի լիովին ու ավելի լրիվ բնեռնվածությամբ ոգտագործվի և յերկրորդ, որ աշխատանքի արտադրողականությունն, ըստ հնարավորին, բարձր լինի: Մենք գիտենք, որ գործնականում սակավ չեն դեպքերը, յերբ կոլեկտիվում աշխատանքի արտադրողականությունն ավելի պակաս է, քան անհատական մնացորդության մեջ: Սա բանի նման չի և անհասկանալի

պետք է վերացնել։ ՌՍՖՍՀ կոլտնտեսությունների կենտրոնի կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ չհանրայնացված տնտեսություններում մի տարվա ընթացքում գործադրված բանվորական աշխատանքային օրերի քանակը՝ հողի հասարակական ոգտագործման ընկերություններում՝ հավասար է տարվա բոլոր բանվորական օրերի կեսից ավելին, իսկ արտելներում՝ ¼-ից մի քիչ ավելի։ Այստեղից պետք է եզրակացնել, որ անհրաժեշտ է աստիճանաբար ավելացնել տնտեսության հանրայնացված մասում գործադրած բանվորական օրերի քանակը, որպեսզի անհատական տնտեսությունը կոլլեկտիվ տնտեսության միջոցով չուժեղանա, այլ. ընդհակառակն՝ կառուցենք խոշոր հանրայնացված տնտեսություն։

Աշխատանքի արտադրողականության վրա ազդում է նաև կոլեկտիվում աշխատանքը վարձատրելու կարգը։ Բոլոր տեսակի կոլլեկտիվներում անհրաժեշտ է այնպիսի կարգ մտցնել, որպեսզի աշխատավորը շահագրգռված լինի աշխատանքի ավելի մեծ արտադրողականության մեջ։ Աշխատանքը վարձատրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն աշխատանքի քանակը, այլև նրա որակը։ Աշխատավարձի այս կարգը կիրառելիս, ճիշտ է կառուցեն կոլտնտեսության այն անդամները, որոնք իրենց խնամքի տակ շատ անաշխատունակներ (ծերեր, յերեխաներ, հաշմանդամներ) ունեն։ Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական արտելներում և գյուղատնտեսական կոմունաներում (այնտեղ, ուր այդ չի արված), տնտեսության ընդհանուր յեկամուտներից մշտական մասնատրումներ կատարել անաշխատունակների սպրուստի և յերեխաների պատսխանատվության համար։ Կամավոր հասմաձայնության հիման վրա այս կարգը հեշտությամբ մտցնել նաև հողի հասարակական ոգտագործման ընկերություններում։

Կոլլեկտիվների պրակտիկայում հանդիպում մի խատեսակ վրդովմունք ու մի խատեսակ աշխատանքի դեպքում՝ կանանց աշխատանքն ավելի պակաս է վարձատրվում, քան տղամարդկանց աշխատանքը։ Սովորաբար կանանց

աշխատանքը կոլեկտիվում վարձատրվում է տղամարդու բանվորական ուժի %-ի չափով: Սա անպայման սխալ է և պետք է վերացնել: Բոլոր դեպքերում հավասար աշխատանքի համար պետք է հավասար աշխատավարձ լինի, անկախ այն բանից, թե ո՛վ է այն կատարում, տղամա՞րդ, թե՞ կին:

Սակայն չեն դեպքերը, երբ աշխատանքը վարձատրելիս նկատի չեն առնվում ոչ միայն աշխատած որերի քանակը և աշխատանքի վորակը, այլ նաև անդամի կողմից կոլտնտեսության մեջ մուծած կապիտալը և հողային փայերը: Այս կարգը սխալ է և անընդունելի, քանի վոր նա հնարավորություն է ստեղծում շահագործելու կոլտնտեսության ամենաչքավոր անդամներին, վորոնք ավելի քիչ են ստանում, թեկուզ և ավելի կաշխատեն, քան նրանք, վորոնք մեծ կապիտալ են մտցրել կոլտնտեսության մեջ: Մի ժամանակ այս կարգը խոչընդոտ և հանդիսանում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Բոլոր դեպքերում պետք է ճանաչել այնպիսի աշխատավարձ, վորի ժամանակ հիմք պիտի ծառայեն աշխատանքին վրա վատնված եներգիան և հաշվի առնվեն անաշխատունակների շահերը: Այս կարգը կոլտնտեսությունների զարգացման մոտավոր շրջանի համար պիտի համարել ամենաճիշտը և ընդունելին:

Աշխատավարձի չափը պետք է միշտ համաձայնեցնել տնտեսական հնարավորությունների հետ: Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր կոլտնտեսությունների անդամների աշխատավարձն ավելի բարձր լինի, քան այդ թույլ են տալիս տնտեսության յեկամուտները: Հակառակ դեպքում՝ կոլտնտեսությունը տարեցտարի իր անդամներին աշխատավարձից պարտք կմնա կամ կոգտագործի արտադրության համար ստացած վարկերը: Դրույքները վորոշելիս չպետք է թույլ տալ, վոր շատ բաժանումներ մտցվեն և մեծ տարբերություն լինի ամենացած և ամենաբարձր դրույքների մեջ և դա այն պատճառով, վոր առանձին աշխատավորների մեջ մասնայորեն վերցրած՝ վորակավորման խիստ տարբերություն չկա: Բավական է, յեթե կոլտնտեսա-

թյան մեջ բանվորական ուժը բաժանվի յերկք կամ չորս կարգի։ Այս կամ այն կարգում մտցնելը պիտի կատարվի ըստ անդամի վորակի (պատրաստության), նրա աշխատունակության, ջանասիրության և այլ ընդունակությունների հիման վրա, վորոնք բարձրացնում են կամ իջեցնում նրա արժեքը հանրայնացված տնտեսության համար։ Բացառություն կարող է լինել բարձրորակ աշխատավորների համար (դյուղատնտեսների և դյուղատնտեսական այլ մասնագետների, ճարտարապետների, տեխնիկների, հաշվապահների, բժիշկների և այլն), վորոնց աշխատավարձը պետք է վորոշել՝ համապատասխան նրանց վորակի,—յուրաքանչյուր շրջանի համար պրոֆիլության հատատած դրույքներով։ Սա անհրաժեշտ է՝ բարձրորակ աշխատավորներին դեպի կոլտնտեսություն դրավելու համար։ Շարքային անդամների համեմատությամբ ավելի բարձր աշխատավարձ պիտի նշանակել նաև ամեն տեսակ տեխնիկներին, որինակ՝ տրակտորիստներին և այլն։

Աշխատավարձի մեծության կամ փոքրության շուրջը յեղած սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է տնտեսական տարվա սկզբին, տնտեսության արտադրական պլանը, վորը նախատեսում է ամբողջ տարվա աշխատավարձի հատուկ ֆոնդը,—վորոշել աշխատավարձի չափը։ Տարվա ընթացքում ամսական աշխատավարձը լիովին չպետք է տրվի, լինի դա մթերքներով, թե փողով, այլ, որինակի համար, ամսական հատանելիք վարձի 50—60 տոկոսը։ Սա նրա համար է տրվում, վորովհետև անբերրիությունից կամ տնտեսական ուրիշ անհաջողություններից տնտեսության մեջ յեկամուտը կարող է պակաս լինել և վորպեսզի տարվա վերջում կոնֆլիկտներ չլինեն՝ աշխատավարձը պակաս տալու պատճառով։ Կոլտնտեսության յուրաքանչյուր անդամ պետք է իմանա, վոր անբերրիության և այլ դեպքերում նա կարող է մնալ միայն ամսական տրվելիք աշխատավարձով։ Եթե տնտեսությունը տարվա ընթացքում ունեցել է բավարար արդյունք, աշխատավարձի չտրված մասը պետք է տնտեսական տարվա վերջում լիովին հատուցանել։

Պետք է հանձնարարել, որ բոլոր տնտեսություններն ունենան արեմիալ (պարզեվատու) ֆոնդեր, պարզևատրելու համար լավ աշխատանքը, այս կամ այն բարելավումը և այլն, որ բարձրացնում է ամբողջ տնտեսության կամ նրա առանձին ճյուղերի արդյունավետությունը: Այսպես՝ այնտեղ, ուր այդ պահանջում են տնտեսության շահերը, կարելի է թույլ տալ և աշխատանքի գործարքային վարձատրության ձևը:

Առանց աշխատանքի հաշվառման՝ չի կարելի աշխատանքը ճիշտ կազմակերպել, ավելի շահավետ կերպով դատավորել բանվորական ուժը և հաշվել, թե ով վո՛ր քան է աշխատել: Այս պատճառով անհրաժեշտ է կոլտնտեսության մեջ կատարել աշխատանքի հաշվառում: Աշխատած որերի կամ ժամերի քանակը պետք է նշանակել յուրաքանչյուր անդամի հաշվառման գրքույկում և նրա անձնական հաշվի մեջ, վորտեղ անհրաժեշտ է նշանակել նաև աշխատանքի վորակը:

Կոլտնտեսության բոլոր անդամների համար պիտի պարտադիր լինի կոլեկտիվի տնտեսության աշխատանքներին անձնական աշխատանքով մասնակցելը: Պիպի պայքարել այն յերևույթի դեմ, յերբ կոլտնտեսությունների անդամները մի ուրիշ տեղ աշխատելով, իրենց վերխարեն աշխատելու համար վարձում են ավելի եժան բանվորական ուժ: Սա աշխատանքի շահագործման տեսակներից մեկն է, վորը կոլտնտեսության մեջ անպայման պետք է մերժվի: Եթե տնտեսության մեջ բանվորական ուժի պակաս կա, պետք է այն լրացնել նոր անդամներով: Կոլտնտեսության մեջ անձնական պարտադիր աշխատանքի վերաբերմամբ, ժամանակավորապես, բացառություն կարող է լինել միայն նրանց համար, վորոնք ժամանակավոր կերպով աշխատում են կուսակցական, խորհրդային, կոոպերատիվ և այլ ընտրական որգաններում, նաև Կարմիր Բանակում և այլ կրթական հիմնարկներում: Բոլոր մնացած դեպքերում կոլտնտեսության աշխատանքներին անձամբ չմասնակցելը կարող է կոլտնտեսությունից վտարման պատճառ դառնալ:

Կոլտնտեսության մեջ վորպես կանոն՝ չպետք է կի-

թեռուլի վարձու բանվորական աշխատանքը. բայց առաջ-
թյուն կարել չե անել միայն մասնագետներ, որակա-
վոր բանվորներ և տեխնիկներ հրավիրելու դեպքում,
եթե այդպիսիները չկան կոլտնտեսության անդամների
մեջ և այն պայմանով, որ հետագայում նրանք աստի-
ճանաբար դառնան կոլտնտեսության անդամ։ Բացա-
ռություն կարող է լինել նաև դաշտային ծանր աշխա-
տանքի ժամանակ, որինակ՝ հնձի, խոտհարքի ժամա-
նակ և այլն, երբ անխուսափելիորեն կարիք է լինում
ժամանակավոր կամ որավարձ բանվորների։ Սակայն
դա կարող է լինել միայն այն դեպքում, երբ կոլտնտե-
սության անդամները լիովին բեռնավորված են կոլտնտ-
ես ության աշխատանքներով։ Առհասարակ, յուրա-
քանչյուր կոլտնտեսության մեջ պետք է աշխատել, որ
բանվորական ուժը լիովին ոգտագործվի ոչ միայն ա-
մառային աշխատանքների ժամանակ, այլև ձմեռը։ Այդ
պատճառով անհրաժեշտ է կազմակերպել ամեն տեսակի
արհեստանոցներ, ոժանդակիչ և արդյունաբերական
ձեռնարկներ և այլն։ Ջքավոր կոլտնտեսությունների
համար կարելի է թույլ տալ, որ նրա բանվորական
ուժը կողմնակի աշխատանքի դիմի, բայց այն պայմա-
նով, որ նրա աշխատածի մի մասը մտնի կոլտնտեսու-
թյան ընդհանուր գանձարկղը։ Այս մասնատրումների
չափը պետք է որոշի կոլտնտեսությունը, համաձայ-
նություն գալով աշխատավորական վաստակի գնացող
անդամների հետ։

Աշխատանքն ավելի լավ հաշվառման յենթարկելու
և ավելի լավ կազմակերպելու համար անհրաժեշտ է յու-
րաքանչյուր կոլտնտեսության մեջ ունենալ աշխատան-
քը վարձատրելու համար որոշված նորմաներ՝ կոլտնտե-
սության բոլոր ճյուղերի համար.—դաշտավարության
մեջ, գոմում, բանջարանոցում, այգում և այլն։ Այդ
նորմաները, յուրաքանչյուր առանձին շրջանի համար
նայած մեքենայացման աստիճանին, տարբեր շրջաննե-
րում և տարբեր կոլտնտեսություններում կարող են տար-
բեր լինել։ Դրա համար էլ գոյություն ունեցող ընդհա-
նուր նորմաների հիման վրա անհրաժեշտ է գյուղատնտ-
ես ության մեջ մշակել այդպիսի որինակելի նորմաներ
յուրաքանչյուր առանձին շրջանի համար։

Կոլեկտիվ տնտեսությունների տեխնիկայի զարգացումը, այսինքն՝ մթերքներ վերամշակելու համար ձեռնարկներ կառուցելը, տրակտոր և այլ բարդ մեքենաներ կիրառելը պահանջում է, որ գյուղատնտեսական կոլեկտիվներում բանվորական ուժը վորակապես բարձրանա։ Վորակյալ բանվորական ուժի պակասն ուժեղ կերպով անդրադառնում է տնտեսության վրա։ Այս բանից խուսափելու համար անհրաժեշտ է բոլոր շրջաններում, մանավանդ վորտեղ կոլեկտիվ շարժումը զարգացած է, կազմակերպել դասընթացներ՝ բարձրացնելու կոլտնտեսությունների բանվորական ուժի վորակը։

Անհրաժեշտ է նաև կանոնավորել բանվորական ուժը թարմացնելու, կաղդուրելու գործը, մանավանդ գյուղատնտեսական կոմունաներում և գյուղատնտեսական արտելներում։ Սովորաբար կոլտնտեսություններում, ինչպես և առհասարակ գյուղական տնտեսություններում, հանգստանալու կամ քայքայված առողջությունը վերականգնելու համար տրված արձակուրդներին արհամարհանքով են նայում։ Անհրաժեշտ է, վոր կոլտնտեսության յուրաքանչյուր անդամ ամեն տարի վորոշ ժամանակով հանգստանալու գնա, վորը նա իրավունք կունենա ոգտագործելու այնպես, ինչպես վոր ինքն ավելի համար կգտնի։ Հանգստանալիս նա վարձատրվում է այնպես, ինչպես աշխատելու ժամանակ։ Բացի այդ, միևնույն ժամանակն է այս հարցը լուծել գործնականապես՝ աշխատանքի մասին նախատեսած օրենքով և գյուղական տնտեսության մեջ բանվորներ վարձելու մասին գոյություն ունեցող ուրիշ կանոնադրություններով, մանավանդ գյուղատնտեսական կոմունաներում։

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Գործնականում պոյություն ունեն կոլտնտեսությունների յեկամուտների բաշխման ամենաբազմապան ձևեր։ Շատ հաճախ, գոնե հողի հասարակական մշակման ընկերություններում և գյուղատնտեսական արտելներում, յերբեմն էլ կոմունաներից մի քանիսում,

յեկամտի բաշխման կարգն արդելք և հանդիսանում տնտեսության հանրայնացված ու անբաժանելի կապիտալների աճմանն ու կուտակմանը: Այս դեպքում, սովորաբար, ով ինչքան կապիտալ և մուծել կոլտնտեսության մեջ, նա այնքան էլ յեկամուտ է ստանում, առանց հաշվի առնելու առանձին անդամի կողմից գործադրած աշխատանքի քանակն ու վարակը: Հաճախ զուտ ոգուտն ամբողջովին բաժանվում է կոլտնտեսության առանձին անդամների մեջ: Յեկամուտի բաշխման այս ձևերը սխալ են ու հակասում են խոշոր հանրայնացված տնտեսության շահերին:

Բոլոր գյուղատնտեսական կոմունաներում, կոլեկտիվներում և գյուղատնտեսական արտելներում, վարելեղ արտադրության միջոցներն ու աշխատանքը ավելի կատարյալ կերպով են հանրայնացված, զուտ ոգուտը չպետք է բաժանվի անդամների մեջ, այլ պետք է մտնի հանրայնացված տնտեսության մեջ, նրա անբաժանելի և այլ կապիտալների մեջ, ինչպիսին են՝ հիմնական կապիտալը, շրջանառու կապիտալը, հատուկ կապիտալը, պահեստի կապիտալը և այլն: Զուտ արդյունքը պետք է հատկացնել նաև ընդհանուր կենցաղային և կուլտուրական նպատակների համար, ինչպես, որինակ՝ յերեխաների դաստիարակության, անաշխատունակների (յերեխաների, ծերերի, հաշմանդամների և այլն) ապրուստի համար: Միաժամանակ պետք է աշխատել, վոր զուտ յեկամտից հանրայնացված կապիտալի հաշվին կատարած մասնատումների տոկոսը տարեց-տարի բարձրանա: Յեկամուտները բաշխելիս վոչ մի դեպքում չպետք է հաշվի առնել ավանդները, անդամավճարները և հողը, վորովհետև ավանդների համար վորոշ տոկոս են հատուցանում, անդամավճարների համար վոչինչ չեն հատուցանում, իսկ հողամասերի հատուցումն ձեռնտու չէ միայն կոլտնտեսության ավելի ունեվոր վերնախավի համար: Բոլոր դեպքերում յեկամուտը բաժանելիս, պիտի առաջնորդվել հետևյալ սկզբունքներով. — կոլլեկտիվին ստանձնաբար վե-

ծածել խոշոր միջանակյան մեքենայացված հանրայնացված տնտեսության, վորտեղ աշխատանքի պայմաններ ստորնանտարար թեթևանում են ու բարելավվում, բարելավվում են նաև կոլտնտեսության անդամների կենցաղային պայմանները, իսկ այս հանդամանքը տարեց-տարի կնվազեցնի կոլտնտեսության անդամների հոսունությունը:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՍ

Վոչ միայն կոլլեկտիվ ու խորհրդային, այլ նաև անհատական տնտեսության մեջ աշխատանքը կազմակերպողն աշխատում է, վորքան կարելի յե, շատ յեկամուտ ունենալ: Յեթե նա գրավոր պլան և առանձին մասերի համար համապատասխան դրանցումներ չունի, ապա նա մտքով հաշվում է, թե առաջիկա տարում ինչպիսի անհրաժեշտ ծախսեր պիտի անել և տնտեսության վրա կատարած ծախսերից մոտավորապես ի՛նչ յեկամուտ կարելի յե ապասել: Կոլտնտեսությունը վոչ միայն կազմակերպչորեն պետք է ուժեղ լինի, տնտեսապես՝ արդյունավետ և աճի, վորպես խոշոր հանրայնացված տնտեսություն, այլ դրա հետ միևնույն նա իրեն շրջապատող անհատական գյուղական տնտեսությունների համար կենդանի որինակ պիտի ծառայի, թե վո՛րքան ոգտակար է խոշոր հանրայնացված տնտեսությունը: Ահա այս բոլորը պարտադրում է ամենի պլանայնություն ու կազմակերպվածություն մտցնել կոլլեկտիվների շինարարության մեջ:

Ամենից առաջ կոլտնտեսությունների զարգացումն ու նրանց տնտեսական շինարարությունը պետք է իրենց անդրադարձումը գտնեն հողային որգանների՝ յուրաքանչյուր առանձին շրջանի գյուղատնտեսության զարգացման համար կազմած պլաններում, ինչպես նաև կոոպերատիվ ու այլ կազմակերպությունների պլաններում: Սա նշանակում է, թե յուրաքանչյուր կոլտնտեսություն առանձին վերցրած՝ պետք է սերտորեն կապված լինի տեղական տնտեսական կյանքի հետ: Որինակի համար, անոգուտ կլիներ մի մեծ ջրաղաց շինել, միայն

մեկ, կամ նույնիսկ մի քանի կոլտնտեսությունների ցո-
թենն աղալու համար: Այդ ջրաղացն անպայման պետք է
ծառայի տվյալ ամբողջ շրջանի համար, ճիշտ այնպես,
ինչպես յեթե ջրաղացը չիներ գյուղատնտեսական վար-
կային ընկերությունը կամ վորևե պետական որդան,
ապա այդ ջրաղացն, ի հարկե, պետք է ծառայեր և՛ կոլ-
տնտեսությանը: Բացի այդ, կոլտնտեսությունների
գյուղատնտեսության զարգացման պլանների մեջ մբա-
ցնելը կարևոր է նաև նրա համար, վոր գյուղատնտե-
սական բարդ մեքենաներ հայթայթելը, գյուղատնտե-
սական վարկ բաց թողնելը և այլն հատատսվում է հա-
զային և ուրիշ որդանների ծրագրերով, իսկ կոլտնտե-
սությունների համար կարևոր է, վոր նրանք տնտեսա-
կան տարվա սկզբից իմանան, թե ի՛նչ բանի վրա կարող
են նրանք հույս դնել—վարկավորման, մեքենաներ և
ուրիշ ինվենտար, բանվոր և արդյունավետ անասուն-
ներ և այլն ստանալու տեսակետից: Կարևոր է նմանապես,
վոր նրանք իմանան, թե ի՛նչ կարգով և մոտավո-
րապես ի՛նչպիսի պայմաններով նրանք կարող են վաճա-
ռել իրենց ընկերությունից ստացած մթերքները: Կոլ-
տնտեսության արտադրական պլանը կազմելիս կարևոր
է նախատեսել այս բոլորը:

Կոլտնտեսությունների հետ կատարած մեր աշխա-
տանքի փորձը ցույց է տալիս, վոր այն կոլլեկտիվները,
վորտեղ տնտեսության աշխատանքը պլանով է կատար-
վում և վորտեղ գոյություն ունի հաշվապահություն,
այդպիսի կոլլեկտիվները կազմակերպչորեն և տնտեսա-
պես ավելի ուժեղ են և ավելի արդյունավետ: Այս պատ-
ճառով էլ անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կոլտնտե-
սություն ունենա կազմակերպչական—տնտեսական պր-
լան, կամ, յեթե կոլտնտեսությունը փոքր է և այդ բա-
նը դժվար է նրա համար իրագործել, ապա առնվազն
նա պիտի կազմի յուրաքանչյուր տարվա արտադրական
պլանը: Բացի դրանից, յուրաքանչյուր կոլտնտեսություն
ճիշտ հաշվառում պիտի կատարի՝ հաշվապահության
բարդ կամ պարզ սիստեմով, նայած թե ինչքան ուժեղ
է կոլտնտեսությունը:

Վորպեսզի կոլտնտեսության մեջ հնարավոր լինի

անտեսությունն ուղիղ հիմքերի վրա դնել և տվյալ շրջանի համար սահմանել ավելի ձեռնտու սերմնաշրջանառություն և այլն, անհրաժեշտ է հողաշինարարություն կատարել: Հողաշինարարություն ասելով հասկացվում է ոչ միայն ընդարձակել և վորոշել կոլտնտեսության հողային սահմանները, այլև տնտեսության հազերը կուլտուրական վիճակի մեջ դնել: Սրա համար էլ հողաշինարարությունը կիրառելիս՝ հողաշինարարի հետ մեկտեղ հողաշինարարությանն անպայման պետք է մասնակցի և դյուղատնտես, իսկ յեթե պահանջվում են մելիորատիվ աշխատանքներ, ապա նաև մելիորատորը:

Ընդհանրապես կենտրոնական որդաններին վորոշման համաձայն՝ կոլտնտեսությունների հողաշինարարությունը, անհատական տնտեսությունների համեմատությամբ, կատարվում է առաջին հերթին՝ պետական բյուջեյից հողային որդաններին բաց թողած միջոցներով: Մելիորատիվ աշխատանքների համար դարձյալ գլխավորապես կոլտնտեսություններին բաց և թողնվում արտոնյալ ու յերկար ժամանակով վարկ:

Տնտեսական կազմակերպչական կամ արտադրական որոնք կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե շուկայում ի՞նչ միթերքների պահանջն ավելի յե և հետևապես՝ ի՞նչ միթերքներ ավելի ձեռնտու յե արտադրել: Յերկրորդ՝ անհրաժեշտ է հաշվի առնել, թե տվյալ շրջանում ի՞նչ հացահատիկային կամ տեխնիկական կուլտուրաներ ավելի յավ են աճում, կամ թե կենդանիների ի՞նչ տեսակները (կաթնատու կենդանիներ, վոչխար, խոզ և այլն) ավելի ձեռնտու յե բազմացնել: Այս պետք է հաշվի առնել, թե տնտեսություններն ինչ միջոցներ ունեն, այսինքն՝ իրենց համար ի՞նչ անհրաժեշտ մեքենաներ, և ուրիշ ինվենտար, բանվոր տնասուններ, փող, առհ ի՞նչ քանակությամբ բանվորական ձեռքեր ունեն նրանք: Այս բոլորի հիման վրա յել կազմվում է պլանը, վորի մեջ հատուկ տեղ են հատկացնում տնտեսության այն ճյուղերին, վորոնցից յենթադրվում են ավելի մեծ յեկամուտ ստանալ: Մերձքաղաքային տնտեսության մեջ ձեռնտու յե կթի տնասուններ բազմացնել, դաշտավայրում ձեռնտու յե հացահատիկային տնտեսություն

վարել, իսկ մյուս շրջաններում՝ ամեն տեսակ աշխատանքներ։ Տնտեսության յուրաքանչյուր ճյուղի համար պլանում նախատեսում են յենթաբերյալ ծախսերը, բանվորական ուժերի քանակը և այլն, նաև յենթադրյալ ընդհանուր յեկամուտն ու զուտ ոգուտը։

Ամենակարևորն այն է, որ կազմակերպչական-տնտեսական կամ արտադրական պլանը կազմելիս դիմեն գյուղատնտեսի ուղնուծյանը, որն ավելի լավ հաշվի կառնի տնտեսության շահերը, այսինքն՝ ավելի ճիշտ կերպով կլինի տնտեսությունը։ Կոլտնտեսություններին ապրոնոմիական ուղնուծյուն պետք է ցուցադրեն հողային արդյունների շրջանային գյուղատնտեսները, գյուղատնտեսական կոոպերացիայի միությունների ապրոպերատորները, բացի դրանից, պետությունից հատուկ միջոցներ են բաց թողնում՝ կոլտնտեսության հատուկ ապրոնոմիա ստեղծելու համար և այն հաշվով, որպեսզի այն շրջաններում, որտեղ կոլեկտիվ շաքարումը զարգացած է, մոտավորապես 15 կոլտնտեսության համար մեկ գյուղատնտես լինի։ Սա, իհարկե, մեծ բեռնավորում է և հետագայում անխուսափելի է, որ կոլտնտեսությունների գյուղատնտեսների թիվը մեծանա։ Կոլտնտեսությունների գյուղատնտեսների ծախսի մի մասն իրենց վրա պետք է վերցնեն և կոլտնտեսությունները՝ համապատասխան միջոցներ հատկացնելով այս բանի համար։

Մինչև այժմ կազմակերպված մեր կոլտնտեսությունների ճնշող մեծամասնությունը դեռևս խոշոր, միանգամայն արդյունավետ տնտեսություններ չեն։ Նրանց մեծ մասը փոքր տնտեսություններ են՝ թե՛ տնդամների քանակով և թե՛ հողի տարածության մեջ ու կապիտալով։ Կոլտնտեսությունները չպետք է կանգ առնեն իրենց զարգացման այս մակարդակի վրա, ընդհակառակն, նրանցից յուրաքանչյուրն պիտի աշխատի տարեց-տարի խոշորանալ։ Խոշորացումը պետք է ընթանա թե՛ ի հաշիվ տնտեսության ներսում կապիտալների կուտակման և տնտեսության նոր ճյուղերի կազմակերպման՝ մթերքներ վերամշակելու ձեռնարկները, ինտենսիվ ճյուղերի (այգեգործություն, բանջարաբուծա-

թյուն, անասնաբուծություն, տեխնիկական կուլտուրաներ և այլն) զարգացում և թե՛ ի հաշիվ հողային տերիտորիայի ընդարձակման և անդամների թվի ավելացման՝ ստիպնանաբար ներգրավելով շրջապատի անհատական տնտեսությունները։ Բացի դրանից, կոլտնտեսությունների խոշորացումը կարող է և պետք է ընթանա մանր կոլտնտեսությունների միացումից՝ խմբակային միություններ կազմելու ուղիով, այսպիսով, ստիպնանաբար առանձին մանր կոլտնտեսություններից կստեղծվի խոշոր տնտեսություն՝ կենտրոնացած վարչությամբ։

Կոլտնտեսությունների խոշորացումը չի կարող ընթանալ առանց արտադրության միջոցների՝ մեքենաների, շենքերի և այլնի համապատասխան փոփոխման։ Այս խոկ պատճառով թե՛ տնտեսական–կազմակերպչական և թե՛ տարեկան արտադրական պլանը կարիք կունենա՝ անհրաժեշտ և վերոհիշյալ հիմքերով նկատի ունենալ կոլտնտեսությունների տարեկան ստիպնական ամբողջական կամ մասնակի խոշորացումը։

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ

Կոլտնտեսության ներքին կյանքի կազմակերպման հարցերը սերտորեն կապված են տնտեսության կազմակերպման հարցերի հետ։ Եթե կոլտնտեսության կենցաղի մեջ անդամների հարաբերություններ շրջանում անհարթություններ կան, ապա դա անդրադառնում է նաև տնտեսության աշխատանքների վրա։

Հանձին կոլտնտեսությունների ներքին կյանքը վերջնական չի տարբերվում անհատական տնտեսության ներքին կյանքից։ Կեղտոտ բնակարաններ, կեղտոտ զգեստներ. չկա բաղանիք և հարմար լվացքատուն։ Կոլտնտեսության անդամները կատարում են ամեն տեսակ կրոնական ծեսեր, հարբում են, կռվում իրար հետ. նրանց և ցերեկաստարդության մեջ կուլտուր–դաստիարակչական աշխատանք համարյա չի տարվում կամ շատ թույլ է տարվում։ Այս բոլորը միասին վերցրած՝ նշանակում է անհատական տնտեսության կենցաղային սովորու-

թյուններն իրենց բոլոր պակասություններով փոխադրել կոլտնտեսություն:

Կոլտնտեսությունները գյուղում հանդիսանում են վոչ միայն տնտեսական, այլև նոր կենցաղի ոլորտները: Առանց կոլտնտեսության ներքին կենցաղը փոխելու, առանց նրա անդամների կուլտուրական մակարդակը բարձրացնելու և առանց հաստատվող սերնդի դաստիարակչական գործը ճիշտ հունի դնելու՝ մենք չենք կարող կառուցել խոշոր հանրայնացված տնտեսություն: Այս պատճառով յուրաքանչյուր կոլեկտիվում, մանավանդ կոմմունաներում և արտելներում, անհրաժեշտ է նրանց անդամների համար կենցաղային այնպիսի պայմաններ ստեղծել, (իսկ սա՝ հենց իր կոլտնտեսության ունեցած միջոցներով միանգամայն հնարավոր է), վորոնց միջոցով կոլեկտիվում ավելի լավ կյանք կստեղծվի, քան անհատական տնտեսության մեջ:

Սմենից առաջ անհրաժեշտ է բնակարանային պայմանները բարելավելու համար միջոցներ ձեռք տալ, բնակարաններում կարգ ու մաքրություն մտցնել: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, վոր կոլտնտեսության անդամների ու սրանց ընտանիքի հագուստը կանոնավոր լինի և հարմարեցրած թե՛ աշխատանքի համար և թե՛ առողջությունը պահպանելու համար:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հատուցվող սերնդի դաստիարակության վրա: Դրա համար անհրաժեշտ է, գոնե ավելի մեծ կոլտնտեսություններում, կազմակերպել մատուներ, մանկապարտեզներ ու դպրոցներ: Շատ կոլտնտեսություններում այս բանն արվում է: Այս գործում ուշադրության պիտի դան տեղական գործիքների ժողովրդական լուսավորության և առողջապահության բաժինները՝ կոլտնտեսություններին տալով պատրաստված աշխատակիցներ, խորհուրդներ ու նյութական միջոցներ և. այլն: Եթե հնարավոր չի, վոր կոլտնտեսությունը մշտական բժիշկ ունենա, ապա անհրաժեշտ է, վոր բժիշկը պարբերաբար այցելի և կոլտնտեսության անդամներին ու սրանց ընտանիքներին բժշկական քննության յենթարկի, բժշկի և խորհուրդ-

ներ տա, թե տարեշրջությունը պահպանելու տեսակետից ինչպե՞ս ավելի լավ կլինի կազմակերպել կոլտնտեսության ներքին կյանքը:

Կոլտնտեսության անդամներն անպայման պետք է մասնակցեն տեղական ամբողջ հասարակական-քաղաքական ու մտավորական կյանքին, որինակ՝ դպրոցի-կամին և չբնդրծիկամին կից գյուղատնտեսական խորհուրդներում, քաղլուսավորի աշխատանքին, տեղական խորհրդային և կոոպերատիվ որդաններում և այլն, ապրելով նրանց աշխատանքների վրա և հետաքրքրություն տածելով կոլեկտիվացման հարցերի շուրջը: Այս բոլորը հնարավոր է միայն այն դեպքում, երբ իրենց խակ կոլտնտեսության անդամների կուլտուրական մակարդակը բարձրանա: Այս նպատակով ամեն կոլտնտեսության մեջ անհրաժեշտ է կազմակերպել զանազան խմբակներ՝ գյուղատնտեսական, հասարակական-քաղաքական հարցերն ուսումնասիրող, կոլտնտեսությունների շինարարության ուսումնասիրող խմբակներ, նաև կամավոր ընկերությունների բջիջներ, ինչպիսին են՝ ՊԱՋԸ-Սվիաքիմը, «Դարձի Անդրադիտությունը» և այլն: Կոլտնտեսությունները պետք է տանեն համապատասխան սմատրեր, լրագրներ, վարպետի նրանց անդամները չկարենան ընդհանուր տնտեսական ու քաղաքական կյանքից: Պետք է հանձնարարել, որ վերոհիշյալ սմատրերն ու լրագրները կարդացվեն դյուրամարտեն խմբակներում կամ ժողովներում:

Կոլտնտեսություններում կրոնական ծեսերի և ամեն տեսակ «արբելի» տոների թիվը, համաձայն կոլտնտեսությունների կուլտուրական ոճման, տարեց-տարի պիտի պակասի: Սրանց փոխարեն տարակարգ և ուրիշ զբաղմունքներ ու զվարճություններ մտցնել, որինակ՝ սպորտ, ներկայացումներ, եքսկուրսիաներ դեպի լավագույն կոլտնտեսություններ կամ քաղաք, գործարաններ ու ֆաբրիկաներ, դեպի փորձնական կայաններ. վերջապես կարելի է ծանոթանալ, թե ի՞նչպես ավելի լավ և վարել տնտեսությունը, ի՞նչ բան ավելի ձեռնտու է մշակել և այլն:

Կոլտնտեսությունների անդամների կենցաղը, բա-

բելավող, նրանց կուլտուրական մակարդակը բարձրացնող և հասարակայնությունը զարգացնող բոլոր աշխատանքների հիմքում պետք է մեկ հիմնական նպատակ դրվի. այս բոլոր միջոցներով ամենամեծ չափով ոժանդակել հանրայնացված խոշոր կոլեկտիվ տնտեսության ոճմանն ու զարգացմանը:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Վորպեսզի կոլտնտեսությունը հաջող զարգանա և նրա անդամների ներքին կյանքը տարեց-տարի բարելավվի, անհրաժեշտ է ապահովել կոլեկտիվների ճիշտ ղեկավարությունը: Մենք գիտենք, վոր կոլտնտեսության վարչության բարձրագույն որգանը, նրա տնտեսական և ներքին կյանքի բոլոր հարցերի վերաբերմամբ՝ հանդիսանում է կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովը: Իսկ կոլտնտեսության գործնական ղեկավարը՝ նրա ընտրական որգանն է, վորին՝ կոլտնտեսություններում ընդունված է խորհուրդ անվանել:

Գործնականում չատ հաճախ է պատահում, վոր կես տարով և ավելի ժամանակով ընդհանուր ժողով չի գումարվում, և ամբողջ աշխատանքը կատարում է խորհուրդը, ինչպես, որինակ, վարկի համար մուրհակներ տալը և տնտեսության նոր ճյուղեր կազմակերպելը, առանց այս հարցերի վերաբերմամբ ընդհանուր ժողովի վճիռն ունենալու: Ցեվ ընդհակառակը, հաճախ պատահում է նույնպես, վոր ընդհանուր ժողովները գումարվում են համարյա ամիսը մի քանի անգամ և վճռում ընթացիկ կյանքին ու կոլեկտիվի աշխատանքին վերաբերող բոլոր խնդիրները, վորոնք պետք է լուծեին ընտրովի մարմինները: Ինչպես մեկը, այնպես էլ մյուսն անպայմանորեն և և ամենից առաջ անդրադառնում է կոլեկտիվի տնտեսության զարգացման վրա: Լավ չի, ի հարկե, յերբ ընդհանուր ժողովը հաճախակի գումարվելով, քննում է ամեն տեսակ մանր խնդիրներ: Այս մանր խնդիրներից հաճախ առաջանում են վեճեր ու դժտություններ, վոր անդրադառնում են կոլեկտիվի միությունության ու կազմակերպվածության և նրա անդամների աշխատանքի արտադրողականության վրա: Լավ չի.

նույնպես, որ ընդհանուր ժողովը չի գումարվում և վերոհիշյալ բոլոր հարցերը լուծում է խորհուրդը: Իսկ ընդհանուր ժողովը մի քանի ամսից հետո կամ տարվա վերջին, լսելով զեկուցում այս կամ այն որոշումների մասին, չի համաձայնվում խորհրդի հետ: Այս հողի վրա նույնպես կոնֆլիկտներ են առաջանում, որոնք հաճախ կոլեկտիվը տանում են դեպի քայքայում: Ինչպես իրենց կոլտնտեսությունները, այնպես էլ նրանց որոշումները պետք է դրա դեմ վճռական պայքար մղեն: Պետք է պարզորոշ սահմանել, թե ինչո՞վ պետք է զբաղվի ընդհանուր ժողովը և ինչո՞վ պիտի զբաղվի նրա ընտրյալ որդանը՝ խորհուրդը: Սահմանորոշելով նրանց պարտականությունները, պետք է հետևել, որ այդ պարտականություններն ամբողջությամբ կատարվեն թե՛ մեկի և թե՛ մյուսի կողմից:

Ընդհանուր ժողովը, որպես կանոն, պիտի հաստատի տնտեսության ընդհանուր պլանը, տնտեսական շինարարության ու ներքին շինարարության հիմնական խնդիրները—փարի տունալու, մթերքների վաճառքը և աշխատանքը կազմակերպելու ու վարձատրելու խնդիրները և այլն: Ինքն լսած ինքյան հասկանալի է, որ ընդհանուր ժողովը քննում է ու հաստատում կոլտնտեսության կանոնադրությունը, ներքին կարգապահության կանոնները և սրանց մեջ կատարված բոլոր փոփոխությունները, նաև անդամների ընդունելությունն ու վտարումը, յեկամուտների բաշխման կարգը և այլն: Իսկ խորհուրդը պետք է քննի ու լուծի այն բոլոր խնդիրները, որոնք բղխում են կանոնադրությունից և ընդհանուր ժողովի որոշումներից և այս որոշումները կիրառի կյանքում: Բացի դրանից, խորհրդի պարտականությունն է զեկուցել գյուղատնտեսական կոլեկտիվի ամենօրյա կյանքը: Այս պարտականությունները խորհրդի անդամները բաժանում են իրենց մեջ, որպեսզի լավ կատարեն: Եթե կոլտնտեսությունը մեծ չի, ապա տնտեսությունը սովորաբար զեկավարում է խորհրդի նախագահը, իսկ յեթե կոլտնտեսությունը մեծ է, ապա տնտեսության առանձին ճյուղերի զեկավարությունն ընկնում է կամ խորհրդի առանձին ան-

դամների վրա, կամ սրա համար հատուկ նշանակված մարդկանց վրա, որոնք նշանակվում են թե՛ կոլտնտեսության անդամներից և թե՛ հրավիրած վարձու աշխատավորներից (ազրոնոմ): Այս դեպքում խորհրդի պարտականությունն է նշանակված դեկավարների միջոցով տնտեսության առանձին ճյուղերի վրա ընդհանուր ղեկավարություն ունենալ:

Վերատուղիչ հանձնաժողովն ընտրվում է նրա համար, որպեսզի ստուգի կոլտնտեսության տնտեսական կյանքը, տնտեսության առանձին ճյուղերի ղեկավարների աշխատանքը և խորհրդի տնտեսական գործունեությունը՝ ամբողջությամբ վերցրած: Սովորաբար վերատուղիչ հանձնաժողովները թույլ են աշխատում, կամ բոլորովին չեն աշխատում, որի շնորհիվ և շատ են պատահում չարաշահության, անտնտեսավարության և այլ դեպքեր: Պետք է աշխատել, որ վերատուղիչ հանձնաժողովները ճիշտ ու կանոնավոր կատարեն իրենց պարտականությունները և ամեն տեսակ անտնտեսավարության և չարաշահության դեմն առնեն: Կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովը խորհրդի և վերատուղիչ հանձնաժողովի նկատմամբ պետք է ուժեղացնի իր պահանջները: Կոլտնտեսությունների միությունները ու սեկցիաները պետք է կոլտնտեսության ընտրական որդանների գործունեությունը ստուգեն հերթով ստուգեն:

Սովորաբար կոլտնտեսության մեջ կանոնադրությունն այն ժամանակ են մոռանում, երբ պետք է լինում հարկի համար արտոնություն ստանալ, վարկավորվել և այլն: Կոլտնտեսության ամենուրեք կյանքում կանոնադրությունը, որպես նեբքին կյանքի որենք, համեմատաբար ստկամ է գործածվում: Սա ճիշտ չէ: Պետք է աշխատել, որ կոլտնտեսության յուրաքանչյուր անդամ իմանա այն կանոնադրությունը, որի հիման վրա նա ապրում է ամբողջ կոլլեկտիվում, ինչը կբերի այդ կանոնադրությունը և ոժանդակի, որ մյուս անդամները ևս կիմանան այն: Կանոնադրության կիրառման վերաբերմամբ մեծ պարտականություններ են ընկնում խորհրդի և վերատուղիչ հանձնաժողովի վրա: Ճի-

թե կանոնադրությունը բարդ և, անհասկանալի կամ դժվար է այն կյանքում կիրառել, պետք է փոխել, պարզացնել, դարձնել հասկանալի, հեշտացնել, բայց յեթե նա ընդունված է, պետք է կիրառել կյանքում:

Բայց սրանից, լինում են դեպքեր, յերբ ընդհանուր ժողովն ընդունում է ներքին կարգապահության այնպիսի կանոններ, որոնք չեն բղխում կանոնադրությունից. սրանից առաջանում է այն, որ կանոնադրությունը մի բան է ասում, իսկ ներքին կարգապահությունը՝ մի այլ բան: Սա նույնպես սխալ է: Ներքին կարգապահությունը միշտ պետք է լինի փոխի կանոնադրությունը կամ հակասի նրան, այլ միայն զարգացնի տրված կոլտնտեսության ընդունած կանոնադրությունը: Ներքին կարգապահության կանոնները պետք է կիրառվեն այնպիսի ճշտությամբ, ինչպես և կանոնադրությունը: Սրա համար էլ ընդհանուր ժողովում ներքին կարգապահության կանոնները պետք է կախել աչքի ընկնող տեղում, որպեսզի կոլտնտեսության ամեն անդամ կարողանա կարդալ, յերբ իրեն պետք լինի: Ավելի լավ կլինի, որ ներքին կարգապահության կանոնները հրատարակվեն որպես ընդհանուր կերպով, այլ կոլտնտեսության կյանքի յուրաքանչյուր ճյուղի վերաբերյալ առանձին, որինակ՝ աշխատանքի կազմակերպման և աշխատավարձի կանոնները պետք է առանձին մշակել՝ կոլտնտեսության համապատասխան կենտրոնի հիման վրա. դրանում կատարած աշխատանքի կանոնները՝ առանձին, դաշտավարության, բանջարանոցային աշխատանքի համար առանձին, բնակարանային հարցի և առողջապահության կանոնների համար՝ առանձին և այլն:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Կոլտնտեսությունների ամրանն ու զարգացմանը դաշտքնթաց ուժեղանում է նրանց ազդեցությունը շրջակա գյուղացիական բնակչության վրա՝ նրանց կոլեկտիվացմանն ամանդակելու և ադրիկուլտուր բարելավումներ մտցնելու առնչակետից: Բայց դարձնակոնում

հանձին կարելի յն դիտել, վոր կոլոնտեսությունն ինքն իր մեջ ամփոփելով՝ շրջակա բնակչության հետ վաչ մի տնտեսական ու հասարակական կապ չի ունենում: Ճինչդեռ յուրաքանչյուր կոլոնտեսության նպատակն է՝ կենդանի որինակ ծառայել ու գործնականում ապացուցել խոշոր հանրայնացված տնտեսության ձեռնտվությունը:

Կոլոնտեսության տնտեսական կապը շրջակա գյուղական տնտեսություններին հետ չպետք է ստեղծվի կոլոնտեսության կողմից պետությունից ստացած միջոցների հաշվին՝ այդ տնտեսություններին ոգնություն հասցնելով: Դրա համար գոյություն ունին վարկային հիմնարկություններ, գյուղացիական փոխոգնության ընկերություններ կոմբինատներ և այլն: Այս հիմնական խնդիրը կոլոնտեսությունը լուծում է նախ ճիշտ հիմքերի վրա կառուցելով իր սեփական տնտեսությունը, վորի յեկամուտը պիտի ավելի բարձր լինի, քան անհատական տնտեսությանը, աշխատանքի արտադրողականությունը՝ ավելի և աշխատանքը՝ հեշտ: Մյուս կողմից՝ այս խնդիրը լուծվում է ամեն տեսակ ագրոնոմիական բարելավումներ կիրառելով, վորոնք նպաստում են շրջակա անհատական տնտեսությունների կապիտալացմանն ու կոլեկտիվացմանը: Որինակ, կոլոնտեսությունը պետք է իր վրա վերցնի լավորակ սերմերի, գեղական տնտեսությունների բուծումը, պտղատու ծառերի տնկարաններ հիմնելը և այլն: Կոլոնտեսությունն իր վրա պետք է վերցնի նաև սերմֆոնդի, մելիորատիվ, տեսանարուծական, կտավատարուծական, սերմանման, քամբակի և այլ ընկերությունների կոմպանիզացման նախաձեռնությունն ու ղեկավարությունը, վորոնց միջոցով անհատական գյուղացիական տնտեսությունն առաջնանալար կվերածվի կոլեկտիվ տնտեսության: Կոլոնտեսության աշխատանքի այս պայմանները կատարեն, վոր անհատական տնտեսությունն ավելի ուշադիր դիտի կոլոնտեսության դարգացմանն ու նրանից որինակ վերցնի: Ահա՛, թե ի՞նչ է ասել Լենինն այս մասին. «Պոմոնայների ոգնությունը շրջակա գյուղացիությանը չպետք է համարել միայն առաստությունից բղխած ոգ-

նություն, այլ այդ ոչնությունը պետք է սոցիալիստական ոչնություն լինի, այսինքն՝ գյուղացիներին հնարավորություն տա անհատական կղզիացած տնտեսությունից անցնել ընկերություններին» (Վ. Ի. Լենին. «Ճերմակերի ժողովածու», հատոր XV, 399 էջ)։

ՊԱՅՔԱՐ ԿԵՂԾ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

«Կեղծ կոլտնտեսություն» հասկացողությունը տարբեր կերպով է բացատրվում։ Վամանք «կեղծ կոլտնտեսությունը» համարում են այնպիսի միությունը, որտեղ հանրայնացված չեն արտադրության բոլոր միջոցները։ Դա սխալ է։ Բոլոր պարզագույն միություններում արտադրության միջոցները չեն հանրայնացված, և, հետևաբար, բանից դուրս է գալիս, որ այս միությունները կարող չեն «կեղծ-կոլտնտեսություններին» շարքին դասվել։ Ուրիշները «կեղծ կոլտնտեսությունը» համարում են այն տնտեսությունը, որը կիրառում է վարձու բանվորական ուժ։ Կան և ուրիշ շատ բացատրություններ։

Ճեղած փորձի հիման վրա՝ «կեղծ կոլտնտեսության» ամենաբնորոշ հատկանիշներից կարելի է թվել հետևյալները. 1. յերբ աշխատանքի արդյունքների բաշխումը կատարվում է բացառապես մուծած կապիտալների կամ վայերի համաձայն և վոչ թե աշխատանքի վարձատրության ձևով՝ հաշվի առնելով աշխատանքի վորակն ու քանակը, 2. յերբ բարդ մեքենաներ ձեռք բերելու համար կոլտնտեսությանը հատկացրած վարկի, դյուղմեխանարկի և այլ արտոնություններն ուղղորդվում են վոչ թե հանրայնացված տնտեսության համար, այլ անհատական տնտեսության ուժեղացման համար, 3. յերբ վարձու բանվորական ուժը, վորպես կանոն, գործադրվում է առանց աշխատեցնելու կոլտնտեսության անդամներին, 4. յերբ նկատվում է, որ կոլտնտեսությունը կղզիացած է, հրաժարվում է խաշորացումից ու նոր անդամների ընդունելությունից, 5. յերբ կոլտնտեսության գրեթե տակ նրա առանձին անդամները հարստանում են։

Կեղծ կոլտնտեսությունները ծնունդ են մի շարք

պատճառներից: Պատճառներից մեկն այն է, որ գյուղի կուլակ տարրերը ձգտում են կոլտնտեսության դրոշի տակ ոգտագործել կոլտնտեսության ընձեռած զանազան արտոնությունները՝ հարկի, վարկի, մեքենաներ մատակարարելու և այլնի վերաբերմամբ և միևնույն ժամանակ աշխատում են ազատվել բարձր գյուղմիասնությունից, որը ընկնում է գյուղի այս խավի վրա: Ցերկրորդ պատճառը, դա կոլտնտեսությունների կազմակերպչական չինարարության մեջ անբավարար, իսկ մի շարք դեպքերում՝ թույլ ղեկավարությունն է: Վերջապես, յերրորդ պատճառն այն է, որ գյուղատնտեսական կոոպերացիայի միությունները բավարար չափով չեն ընդգրկում կոլտնտեսությունների տնտեսական գործունեությունը: Վերջին հանգամանքը, բացի դրանից, ուրիշ և հանդիսանում հրապարակ դալու բավականին մեծ քանակությամբ «վայրի» կոլլեկտիվների, որոնք ապրում են իրենք իրենց համար, կապ չունեն կազմակերպված շուկայի հետ, այսինքն՝ իրենց մթերքները չեն վաճառում կոոպերացիայի և պետական որգանների միջոցով, ինչպես և արտադրության միջոցները նրանցից չեն ստանում, այլ իրենք անմիջական կերպով վաճառում են իրենց մթերքները և արտադրության միջոցներ ձեռք բերում այնտեղից, որտեղից իրենք են ցանկանում:

Այս բոլոր պատճառները պետք է վերացնել: Կոլտնտեսությունների չինարարության ղեկավարությունը պիտի ուժեղացնել և բոլոր կոլտնտեսություններին ներգրավել գեղջ գյուղատնտեսական կոոպերացիայի ու կապնտեսության միությունները:

Կեղծ կոլտնտեսությունների դեմ պիտի պայքարել զանազան ճանապարհներով: Ամենից առաջ նոր կոլտնտեսություններ կազմակերպելիս՝ անհրաժեշտ և աշխատություն դարձնել միացողների սոցիալական և գույքային կազմի վրա, չթողնելով, որ կոլտնտեսության մեջ մտնեն կուլակ տարրեր և խիստ կերպով կիրառել այն որենքը, որն արգելում է ընտրական իրավունքից զրկված անձանց մուտքը վարչական որգաններին մեջ: Անհրաժեշտ է նաև, որ կոլտնտեսությունների կազմա-

կնքման գործում մասնակցեն հողային վարչություն-ների, կոլտնտեսությունների միությունների կամ սեկ-տիաների ներկայացուցիչները, դյուղատնտեսը և այլն:

Բացահայտ կեղծ կոլտնտեսությունների դեմ պետք և ճնշական պայքար մղել, մինչև անգամ քննել նրանց անդամների անձնական կազմը և լուծարքի յենթարկել այն կոլտնտեսությունները, որտեղ իրոք կուլակների կազմից գոյություն ունի ճնշում: Կեղծ կոլտնտեսու-թյուններն առոչնչացնելու նպատակով՝ նրանց դեմ մղվող պայքարը պետք և տարվի նույնպես տնտեսական ազդեցության ճանապարհով: Այսպիսի միջոցներից են. արտոնությունների կրճատելը կամ վերացնելը, վարկը կրճատել կամ դադարեցնել, արդելել նրանց բաց թողնել տրակտոր կամ այլ բարդ մեքենա, արդյունաբերական կամ ոժանդակիչ ձեռնարկներ կազմակերպելու հնարա-վորություններից զրկել և այլն: Անհրաժեշտ և կոլեկտիվ-ներում կիրառվող վարձու աշխատանքի վրա ուժեղաց-նել հսկողությունը, որ չի դեպքում չթույլատրելով, որ վարձու աշխատանքը կիրառվի այնտեղ, ուր տն-դամների աշխատանքը լիովին չի ոգտագործվում: Այս պայքարի վրա պետք և դարձնել խորհրդային հասարա-կայնության ուշադրությունը: Այս խնդիրները պետք և ավելի լայն կերպով լուսաբանել մամուլում, մասնա-նշելով կուսակցության և Խորհրդային իշխանության կողմից ձեռնարկվելիք կոնկրետ միջոցները՝ կեղծ կոլ-տնտեսությունների դեմ պայքարելու համար:

---

2. ԿՈԼՏՆՏ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԱՊԱՀՈՎԵԼ ՃԻՇՏ ՊԵԿԱԿԱՐՈՒԹՅԱՄԲ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԱԿԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՅԴ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ

Այն շրջաններում, որտեղ կոլտնտեսությունների աճումը մեծ է, նրանք սկսել են միանալ խմբակների մեջ. որպեսզի միահամուռ ջանքերով ողնության գան միացող կոլեկտիվներին՝ ընդհանուր մինչոցներով հրավիրելով գյուղատնտես, տեխնիկ, պահեստի մասերի և այլվող նյութերի համար պահեստներ կառուցելով, մթերքները վերամշակելու համար ձեռնարկումները կազմակերպելով և այլն: Սովորաբար խմբակի մեջ միանում են 10—15 կոլտնտեսություն: Միացող կոլտնտեսությունների թիվը կախված է՝ մի կողմից նրանց մեջ եղած տարածությունից և մյուս կողմից տնտեսապես ուժեղ լինելուց: Չի կարելի, որինակ, խմբակային միացում կատարել իրարից 40 կիլոմետր հեռավորության վրա գտնվող կոլտնտեսություններից: Սովորաբար ամենից հեռու գտնվող կոլտնտեսությունը 20—30 կիլոմետրից ավելի չի լինում:

Խմբակային միացումները, գլխավորապես, ստեղծվում են, որպեսզի թե խմբի մեջ մտնող կոլտնտեսությունների և թե՝ տվյալ շրջանում գտնվող անհատական գյուղացիական տնտեսությունների մթերքները վերամշակելու համար արդյունաբերական ձեռնարկումները միասին կազմակերպեն ու շահագործեն:

Խմբակները կազմակերպվում են պայմանագրական կարգով. պայմանագրում թվում են այն բոլորը, ինչով որ տվյալ միությունը յենթադրում և պարապել: Խմբակների աշխատանքը ղեկավարելու հա-

մաս խմբակի մեջ միացած կոլտնտեսությունների ներկայացուցիչներից կազմվում է խորհուրդ: Յուրաքանչյուր կոլեկտիվ տնտեսության ներկայացուցչությունը վարչվում է ամբողջ կոլեկտիվ տնտեսության կողմից միության մեջ ունեցած նյութական մասնակցության չափով: Խմբակային միացումները կամավոր կազմակերպություններ են: Նոր անդամների ընդունելությունները, ինչպես և հների վերատրումը վարչվում է յուրաքանչյուր առանձին կոլեկտիվ տնտեսության վարչությամբ: Այն դեպքում, երբ այս կամ այն կոլտնտեսությունը խախտում է կամ չի կատարում միացած կոլտնտեսությունների ներկայացուցիչների ժողովում ընդունած պայմանագիրը, նա կարող է վտարվել միությունից:

Խմբակային միության բոլոր գործերն ու ամենօրյա աշխատանքը ղեկավարելու համար խորհուրդն իր անդամների կողմից նշանակում է լիազոր կամ դրա համար հրավիրում է հատուկ անձնավորություն: Վարչական խորհուրդը կամ լիազորն իրավունք ունենա կոոպերատիվ և պետական կազմակերպությունների հետ ամեն տեսակ պայմանագրեր ու գործարքներ կնքելու, նա դրա համար պիտի հավատարմագիր ունենա՝ կոլտնտեսությունների խմբակը մտած բոլոր ներկայացուցիչների կողմից: Խմբակի լիազորի կամ խորհրդի ղեկի համար կոլեկտիվ տնտեսությունները պետք է համապատասխան դրամական միջոցներ գտնեն: Խմբակը մտնող տնտեսություններից կատարվող մասնահանումների չափը հաստատում է խորհուրդը: Բացի կոլտնտեսությունների իրենց մասնահանումներից, այդ նպատակի համար կարող են հատկացվել գյուղատնտեսական կոոպերացիայի միությունների միջոցները և այլ յեկամուտներ: Իսկ յեթե մեծ ծախսեր են պահանջվում, որինակ՝ մթերքները վերամշակելու համար պահանջվում է մեծ արդյունաբերական ձեռնարկում հիմնել, որի համար կոլտնտեսության միջոցները բավական չեն, ապա այդ նպատակով կարող են ոգտա-

գործվել պետական վարկերը, որոնց ապահովության համար խմբակի մեջ միացած կոլտնտեսությունների կողմից համապատասխան պարտավորագիր է տրվում:

Խմբակային միությունները հետզհետե աճելով և ֆինանսական ու տնտեսական ամրապնդվելով, ավելի մեծ դեր պիտի խաղան կոլտնտեսությունների տնտեսական ու կազմակերպչական կյանքում: Այս միացումները առանձնապես պնդահատելի են, որովհետև նրանք պարզանում են միացած կոլտնտեսությունների ինքնագործունեության հիման վրա: Այս միացումների ապարատը, որը ստատարիում և կոլտնտեսությունների տնտեսական շահերին, անմիջականորեն կապված և վերջիններիս հետ և, բացի այդ, խմբային միացումներն, ըստ յերևույթին, կլինեն այն հիմնական ձևը, որ պիտի նպաստի կոլտնտեսությունների կազմակերպչական ու տնտեսական աճմանը և մանավանդ նրանց խոշորացմանը: Պետք է յենթադրել, որ ժամանակին առանձին խմբակները կվերածվեն մի միասնական խոշոր հանրայնացված տնտեսության՝ մի միասնական վարչության:

Աղրոնոմիական ոգնությունը կոլտնտեսություններին՝ նրանց միացման գծով՝ ներկայումս զարգանում և բացառապես խմբակների միջոցով: 1927–28 թվերին կոլտնտեսական աղրոպերսոնալի պահպանության համար, բացի կոլտնտեսությունների հատկացրած միջոցներից, գաշնակից հանրապետությունների կոլտնտեսության կենտրոնների միջոցով, հատկապես խմբակների ապրոպնության համար, բաց և թողնված՝ 600·000 ռուբլի, որպես լրացում ԽՍՀՄ՝ կոլտնտեսությունների համար կազմված պետական բյուջեյի: Ցեղեն յենթադրենք, որ աղրոպերսոնալի ծախսի 25 տոկոսից վոչ պակաս կոլտնտեսությունները վերցնում են իրենց վրա, ապա կոլտնտեսության աղրոպերսոնալի ծախսի ընդհանուր գումարը հասնում է մոտ 1 միլ. ռուբլու: Աղրոպատասխանման կազմակերպությունը, գլխավորապես խմբակային միացումների մեջ՝

կոոպերացիայի միության կանոններին և, մասնավորապես, հողային վարչությունները չի ապահովում վարչությունների կոլեկտիվ անհատության ուժեղ կերպով ապրանքության ցույց տալու: Ընդհակառակը, հողային ուղղություններից և կոոպերացիայից պահանջվում է ուժեղացնել կոլեկտիվության ցույց տալու ապրանքատնտեսական և տեխնիկական ոգնությունը: Դրան զուգընթաց դաշնակից և ավելանում հանրապետության հողժողկոմատների կարգադրությունների, ինչպես և գյուղատնտեսական կոոպերացիայի գործով լեցված գրքերի՝ տեղերին ցուցումներ են տրված, վերջապես հողորդությունների շրջանային ապրանքատարն ուժեղացնի գյուղատնտեսական կոլեկտիվների պրոցեսին ապահովելով և իր պարտականությունը համարելով կոլեկտիվների համար կոոպերատիվական, տնտեսական ու տարարաբական պայմաններ կազմելը:

Յուրաքանչյուր կոլեկտիվություն, մասնավորապես յեթե նա բաղկացած մի քանի անձանց ունի, այդ մի քանիների մասնի ճիշտ հավասարման, ստրկության և մասերի բաժանության, մասնավորապես մի քանիների նորոգման գործում կարիք ունի համապատասխան տեխնիկական ոգնության: Տրակտորներից և այլ մի քանիներից ուղղությունների համար գյուղատնտեսական կոոպերացիայի և հողբաժանների գծով կազմակերպված տեխնիկական ոգնությունը պետք և ընդգրկի նաև կոլեկտիվ տնտեսությունները: Կոլեկտիվությունների խմբակային միավորումները պետք և ստանան վերջապես տեխնիկական ոգնության կազմակերպման բաղդ: Տեխնիկական ոգնությունը չպետք և կազմակերպվի միայն տրակտորների կամ միայն արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկությունների համար: Տեխնիկական ոգնությունն ամենքի ձեռնտու գործերը համար անհրաժեշտ և կազմակերպել միասնական տեխնիկական ոգնություն՝ բոլոր բաղդ և գործ մի քանիների և ինվենտարի համար նաև արդյունաբերական ու ոժանդակի ձեռնարկությունների համար: Այս գործունեությունում տեխնոգնությունը կընդգրկի

ավելի մեծ թվով բնակչություն, մեքենաների նորոգությունն ավելի արագ կկատարվի, աշխատանքի վարակը կբարձրանա և յուրաքանչյուր առանձին մեքենայի ծախսերը կկրճատվեն: Բացի այդ, կոոպերացիայի միությունները ու հողագործները ոգտագործելով խմբակները վարպետ տեխնիկական ոգնության բաղաները, դրանով իսկ գործնական կերպով կոժանդակեն կոլտնտեսությունների գործնական կապին և ազդեցությանը շրջակա բնակչության վրա: Յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության ուժից վեր է նաև իր մոտ ճիշտ հաշվառում ու հաշվապահություն ունենալ, վարվելով դրա համար պահանջվում է հաշվապահական պատրաստություն վարակյալ աշխատավոր: Իսկ վարվելով այդպիսիները քիչ են և առանձին աշխատավոր պահելը մի կոլտնտեսության համար թանկ կնստի, ապա ավելի լավ է կոլտնտեսություններում հաշվառում և հաշվապահություն կազմակերպել, նորից ոգտագործելով նրանց խմբակային միացումները: Խմբակային միացումները կարող են հաշվապահ հրավիրել՝ կոլլեկտիվ տնտեսություններում հաշվառում ու հաշվապահություն կազմակերպելու համար: Նա միաժամանակ թե՛ ղեկավար կլինի և թե՛ հրահանգիչ կոլտնտեսությունների այն աշխատավորանդամների համար, վարոնք նրա ղեկավարությամբ ու ցուցմունքներով՝ յուրաքանչյուր կոլտնտեսության հաշվեմատյանների ու գրասենյակային մատյանների մեջ կսկսեն համապատասխան դրանցումներ կատարել և տարվա վերջում կամ մի այլ անգամ նորից հաշվապահի ղեկավարությամբ ու դյուղատնտեսի մասնակցությամբ կկազմեն տնտեսական տարվա հաշվետվությունը ու հաշվեկշիռը: Այս պայմաններում հաշվառումն ու հաշվապահությունն ավելի լավ հիմքերի վրա կդրվեն և տնտեսավարման արդյունքներն ավելի ճիշտ կերպով կրպարզվեն: Սա յուրաքանչյուր կոլտնտեսությանը հնարավորություն կտա ավելի ճիշտ վարոշել, թե տրվյալ շրջանում վո՛րոնք են տնտեսությանն ավելի ոգտա-

կար, արդյունավետ ճյուղերը և վո՛ր ոնք՝ վնասաբերը։ Իսկ կոլտնտեսության մեջ ծառայող գյուղատնտեսը՝ յուրաքանչյուր տարի՝ կկարողանա վերանայել կազմակերպչական, տնտեսական ու արտադրական պլանները։

ՈՎ ՊԻՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Առանց ճիշտ ղեկավարության, առանց ագրոնոմիական ու տնտեսական ոգնության, առանց պլանային բարգավաճման՝ յուրաքանչյուր հայթայթման ու վարկավորման դեպքում՝ կոլտնտեսությունները չեն կարող հաջող զարգանալ։ Գործնական աշխատանքը մեզ ցույց է տալիս, վոր քայքայվող, «վայրի» և կեղծ կոլտնտեսությունների տոկոսն ավելի մեծ է լինում այն շրջանում, վորտեղ թույլ է կամ բացակայում է կոլտնտեսությունների շինարարության ղեկավարությունը և նրանց տնտեսական սպասարկումը։ Կոլտնտեսությունների ղեկավարությունը կարող է ավելի ճիշտ ու ավելի կատարյալ լինել այն ժամանակ, յերբ այդ ղեկավարությունը հենված է իր իսկ կոլտնտեսության անդամների ամեն ինքնագործունեության և ակտիվության վրա։ Ցերկրորդ՝ կոլտնտեսությունը հաջող կարող է զարգանալ միայն այն ժամանակ, յերբ նա սերտորեն կապված կլինի գյուղատնտեսական կոոպերացիայի ամբողջ սիստեմի և յուրաքանչյուր առանձին շրջանի ամբողջ գյուղական տնտեսության զարգացման հետ։

Գյուղատնտեսական կոլեկտիվների շինարարության մեջ ղեկավարությունը մինչև այժմ յեղել է անբավարար և հաճախ, նույնիսկ, բոլորովին բացակայել է։ Թե՛ գյուղատնտեսական կոոպերացիայի միությունները և թե՛ հողորգանները քիչ են ուշադրություն առել կոլտնտեսությունների շահերն ու կարիքները։ Կոլտնտեսական շարժման զարգացումն ու գյուղացիական չքավոր ու միջակ մասսաների հետաքրքրության աճումը դեպի կոլտնտեսությունները՝ որվա խնդիր դարձրին

գյուղատնտեսական կոլեկտիվների շինարարության ճիշտ ղեկավարության կազմակերպումը: Սա իր արտահայտությունը գտավ ԽՍՀՄ ԺԿԿ և ԿԳԿ-ի 1927 թ. մարտի 16-ի՝ կոլտնտեսությունների մասին կայացրած վորոշման մեջ: Այս վորոշմամբ՝ կազմակերպչական և ադրիկուլտուր ղեկավարությունն ընկնում է կոլտնտեսությունների խմբակների մթերությունների և սեկցիաների վրա, իսկ գործնական աշխատանքները, վորպիսիք են՝ կոլտնտեսությունների մթերքների վաճառահանումը, նրանց համար արտադրության միջոցներ հայթայթելը և վարկավորելն ընկնում է գյուղատնտեսական կոոպերացիայի մթերությունների և վարկային հիմնարկների վրա: Ինքն ըստ ինքյան հասկանալի է, վոր ընդհանուր քաղաքական ուղղությունը և ընդհանուր ղեկավարությունը վերապահվում է պետական իշխանության որգաններին՝ հանձին հարժողկոմատի և նրա տեղական որգանների:

Կոլտնտեսությունների գոյություն ունեցող Համամիութենական Ստրհուրդը ներկայումս իրավաբանորեն ձևակերպված է: Նրա վրա է դրված՝ հայտնաբերել գաշնակից հանրապետություններում եղած կոլտնտեսությունների շինարարության փորձի ընդհանուր արդյունը և գյուղատնտեսական կոլեկտիվների շինարարության ընդհանուր ուղղությունն ու ղեկավարությունը: Հանրապետություններում, կանոնադրության կարգով, կազմակերպվում են կոլտնտեսությունների հանրապետական կենտրոններ՝ իրավաբանական անձի իրավունքով, վորոնց նպատակն է իրագործել կազմակերպչական ղեկավարությունը, ոժանդակել կոլտնտեսությունների ադրիկուլտուր և արտադրական զարգացմանը և կոլտնտեսական շարժումը կապել գյուղատնտեսական կոոպերացիայի և պետական տնտեսության ընդհանուր զարգացման հետ: Բացի այդ, այնտեղ, ուր կոլլեկտիվ շարժումը զարգացած է, կազմակերպվում են կոլտնտեսությունների յերկրային, նահանգային և շրջանային մթերություններ ու սեկցիաներ: Իսկ այնտեղ, ուր կոլլեկտիվ շարժումն ավելի պակաս է զարգացած,

կազմակերպվում են գլխավորապես գյուղատնտեսական կոոպերացիայի միությունները կամ՝ կոլտնտեսությունների սեկցիաներ կամ կոլտնտեսությունների բյուրոներ՝ գավառային և շրջանային: Կոլտնտեսությունների միությունների սեկցիաների մեջ պիտի առնվեն գյուղատնտեսական կոմունաները, գյուղատնտեսական ընկերությունները, հողի հասարակական մշակման ընկերությունները և այն պարզագույն արտադրական միությունները (մեքենատրակտորային, արտելային, մելիորատիվ, սերմնաբուծական և այլն), վորոնք անցնում են հողի հասարակական մշակմանը կամ գյուղատնտեսության այլ ճյուղերում՝ արտադրության հանրայնացված միջոցներով միասին են աշխատում: Տեղական միությունները, սեկցիաները, բյուրոները և կոլտնտեսությունների այլ միությունները անդամագրվում են վերագաս կոլտնտեսական միություններում՝ (մարզային, յերկրային և հանրապետությունների կոլտնտեսությունների կենտրոններում): Կոլտնտեսությունների հանրապետական կենտրոնները պետք և վորպես անդամ մտնեն Կոլտնտեսությունների Համամիութենական Խորհրդի մեջ:

Կոլտնտեսությունների միությունների կազմակերպումով բարելավվում և կազմակերպչական ղեկավարություն կոլտնտեսությունների շինարարության մեջ: Զգալի չափով կրճատվում և «վայրի» կոլտնտեսությունների թիվը, վորոնք կոլլեկտիվ միությունների անջակցությամբ ներդրավվում են գյուղատնտեսական կոոպերացիայի սիստեմի մեջ ու անմիջական կերպով մրցում են կոլտնտեսության միությունների մեջ: Ինչպես վերն ասված եր, կոլտնտեսությունների հանրապետական և տեղական միությունները վաճառահանման, հայթայթման և վարկավորման ոպերատիվ ֆունկցիաներ չպետք և իրենց վրա վերցնեն: Նրանց նպատակն և լինելու՝ կոլտնտեսությունների շինարարության մեջ կազմակերպչական ճիշտ ղեկավարության իրագործումը, նրանց ազբոնոմիական և արտադրական սպասարկումը

և ամեն տեսակի ոժանդակումը, վորպեսզի կոլտնտեսությունների զարգացումը կապվի գյուղատնտեսության պլանային զարգացման և յուրաքանչյուր առանձին շրջանի գյուղատնտեսական կոոպերացիայի հետ: Վաճառահանման, հայթայթման և վարկավորման ամբողջ աշխատանքը պետք է կատարեն գյուղատնտեսական կոոպերացիայի միությունները և վարկային հիմնարկները:

Կոլտնտեսական միությունների (միությունների, սեկցիայի, բյուրոյի և այլն) աշխատանքի համար յուրաքանչյուր մի քանի մասին վերը մատնանշվեց: Պետք է հիշել միայն, վոր կոլտնտեսությունների մասնահանումները՝ նրանց կազմակերպչական ապատրաստման համար՝ տարեց-տարի պիտի ավելանան:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մենք դիտենք, վոր կոլտնտեսությունը կազմակերպող գյուղացին՝ չքավոր թե միջակ՝ չի սովորել վոչ կազմակերպել և վոչ էլ վարել խոշոր հանրայնացված տնտեսություն, այս բանը նա սովորում և գործնականում՝ հենց աշխատանքի ժամանակ: Բայց այս քիչ է: Չքավորին ու միջակին պետք է վոչ միայն գործնականում, այլ թեկուզ մի քիչ էլ գրքերով սովորեցնել, թե ի՞նչպես ավելի լավ ու ճեռնտու կլինի կազմակերպել խոշոր տնտեսություն: Սրա համար բոլոր շրջաններում կազմակերպվում են և պիտի կազմակերպվեն դասընթացներ, հատուկ մշակված ծրագրով, կոլտնտեսությունների համար կազմակերպիչներ ու դեկավարներ պատրաստելու համար: Այս դասընթացներում պետք է խնամքով զբաղվել կոլտնտեսությունների շինարարության վերաբերյալ կարևորագույն կազմակերպչական հարցերով,—արտադրության միջոցների խոշորացումը, կոլտնտեսությունների մեջ ավելի շատ կապիտալ ներ-

դրության և կատարելու յեղանակները, աշխատանքի կազմակերպման, արտադրողականության և աշխատավարձի խնդիրները, ինչպես մասնավոր անտեսության կազմակերպման խնդրին և այլն: Ամբողջ ծրագիրը չը-պետք և ծանրաբեռնել բացառապես ապրոնոմիական հարցերով, վորովհետև 1–2 տարում մենք կոլտնտեսության անդամին ապրոնոմ չենք դարձնի, իսկ կոլտնտեսությունները չեն կարող առանց ապրոնոմի մնալ: Պետք և ավելի ուշադրություն դարձնել վերահիշյալ հիմնական հարցերի վրա, վորոնց ճիշտ լուծման դեպքում մի-այն կոլտնտեսությունը կարող և հաջողությամբ զարգանալ: Անհրաժեշտ և նույնպես ամենուրեք կազմակերպել հաշվապահներ պատրաստելու համար կարճատև դասընթացներ: Այս խնդրի վրա պետք և կոլլեկտիվ տնտեսությունները հատուկ ուշադրություն դարձնեն: Առանց հաշվառման և հաշվապահության չի կարելի շարունակել կոլտնտեսությունների չինարարությունը: Թե՛ այս և թե՛ վերահիշյալ դասընթացներում անհրաժեշտ և, վոր մասնակցեն դիլիավորապես կոլտնտեսությունների անդամները, նաև արդյունաբերական ու գյուղատնտեսական բանվորները:

ԽՍՀՄ ԺԿԽ 1928 թ. մարտի 2-ի վորոշումով դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհներին առաջարկված և՝ հիմնել կոլեկտիվ տնտեսության կազմակերպիչների դասընթացներ, վորի համար 1927–28 պետբյուջեյից ԽՍՀՄ կոլտնտեսություններին բաց և թողնված ավելի, քան 200 հազար ռուբլի: Հասկանալի յե ուրեմն, թե Խորհրդային իշխանության կենտրոնական որգանները ի՛նչքան մեծ նշանակություն են տալիս կոլտնտեսությունների համար կազմակերպիչներ և գեկավարների կարգ պատրաստելուն: Կոլտնտեսությունների համար բացի կազմակերպիչներ, գեկավարներ ու հաշվետարներ պատրաստող դասընթացներից անհրաժեշտ նաև ամենուրեք կազմակերպել կարճատև դասընթացներ՝ ապրոնոմ-մասնագետներին կոլտնտեսական ուղղությամբ վերապատրաստելու համար, ինչպես նաև հրահանգիչներ, կոլտնտեսությունների միու-

թյուններին ու սեկցիաներին վարչության անդամներ պատրաստելու համար: Սա անհրաժեշտ է, որովհետև կոլտնտեսություններին միություններում ու սեկցիաներում, ինչպես և ընդհանրապես կոլտնտեսություններում, աշխատանքի համար պատրաստված կադրեր համարյա չկան: Սրա վրա պետք է ուշադրություն դարձնեն վոչ միայն կոլտնտեսությունների միություններն ու սեկցիաները, այլ նաև կոոպերացիայի միությունները, հողարդյունները, յուտաժինները և այլն:

3. ԻՆՉՊԵ՞Ս ՅԵՎ ԻՆՉՈՎ Է ՈԳՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Գյուղացիության չքավոր ու միջակ մասսաների միացումը գյուղատնտեսական կոլեկտիվներում՝ շատ բարդ ու շատ դժվար, բայց և շատ անհրաժեշտ խնդիր է, յուրաքանչյուր մենք ուզում ենք անտեսապես զարգանալ ու բարգավաճել գյուղի այդ խավերի դրությունը:

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1927 թ. մարտի 16-ի վորոշման մեջ ասված է, վոր «մասնանշված աշխատանքը կիրառելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր կոոպերատիվ շինարարության հիմքում դրված կամավոր անդամության և կոոպերատիվացման ձևերի ընտրության ազատության սկզբունքները կոլեկտիվ շարժման մեջ ավելի հետևողական ու ավելի կատարյալ կերպով պիտի կիրառվեն: Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման ժամանակ վերևում նշում կատարելը կամ կոլտնտեսության պարզագույն ձևերից ավելի բարդ ձևերի փոխանցումը արհեստական կերպով արագացնելը՝ անխուսափելի կերպով խոչոր վնաս կհասցնի կոլեկտիվ շարժմանը և կկատեցվի նրա զարգացումը»: Բայց միաժամանակ թե՛ Կոմունիստական Կուսակցությունը և թե՛ Խորհրդային իշխանությունն ամեն կերպ խրախուսում են կոլտնտեսության մեջ միացողներին: Ամեն տեսակ ոգնության և արտոնությունների միջոցով նպաստում են, վոր անհատական տնտեսությունները ավելի շուտ անցնեն հանրայնացված տնտեսության և կոլտնտեսություններին ել ուժանդակում են, վոր նրանք ամրապնդվեն կազմակերպչական և տնտեսապես:

Խորհրդային իշխանության կենտրոնական որգանների՝ անդամանման կամպանիայի կիրառմանը վերաբերող վորոշման համաձայն, բոլոր տեղական որգանները՝ դարձանուցին անդամանման կամպանիայի համար բայց

թողնված միջոցներն առաջին հերթին պիտի հատկացնեն խորհրդային տնտեսությունների, կոլտնտեսությունների և արտադրական կոոպերատիվների ամրացմանը։ Այսպիսով՝ գարնանացանի սերմանման կամպանիայի կիրառման և գյուղատնտեսության զարգացման հետ կապված բոլոր ձեռնարկումները պետք է նպաստեն կոլտնտեսությունների և արտադրական կոոպերատիվների մաքսիմալ զարգացմանը։

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղատնտեսական միասնական հարկի նկատմամբ կոլտնտեսություններին վերապահվում են մեծ արտոնություններ։ Այսպես՝ գյուղատնտեսական հարկի մասին յեղած 1928–29 թ. կանոնադրության մեջ ասված է. «Այն գյուղատնտեսական կոմմունաներն ու արտելները, վորտեղ յուրաքանչյուր շնչի յեկամուտը բարձր չե իր գավառի (կամ համապատասխան վարչական միավորի), կամ իր շրջանի անհատական գյուղացիական տնտեսության յուրաքանչյուր շնչի միջին յեկամտից,— նրանց հարկը դեղչվում է հետեվյալ չափով.—

Գյուղատնտեսական կոմմունաներինը 60 տոկ.

Գյուղատնտեսական արտելներինը 40 տոկ.

Այն գյուղատնտեսական կոմմունաներն ու արտելները, վորոնց յուրաքանչյուր շնչի յեկամուտը բարձր է, քան իր գավառի անհատական գյուղացիական տնտեսության յուրաքանչյուր շնչի միջին յեկամուտը, յերեսով մատնանշված միջին յեկամտից, նրանց հարկը դեղչվում է հետեվյալ չափով.—

Գյուղատնտեսական կոմմունաներինը—30 տոկոսով։

Գյուղատնտեսական արտելներինը— 25 տոկոսով։

Այն ընկերություններում, վորտեղ հողի հասարակական մշակումը կիրառվում է առանց վարձու բանվորների, տնտեսության հանրայնացված մասից դեղչվում է հարկի 20 տոկոսը։

Բացի դրանից, կոլտնտեսություններին վերապահվում են մի շարք այլ արտոնություններ,—հողային հա-

մանքից տեղափոխվելիս, ցեղական անասուններ բուծելիս և այլն:

Կոլտնտեսությունների վրա հարկ նշանակելիս՝ կարմիր գանակում գտնվող կոլտնտեսության անդամ՝ կարմիր բանակայինների և զինվորական ծառայողների յեկամուտները հարկադրումից ազատվում են: Կոլտնտեսություններում դաշտավարության ստացված յեկամուտն ամենուրեք հաշվվում և ցանքի համաձայն:

Կոլտնտեսություններին արտոնություններ տրվում են որենքի կարգով, ատանց այդ մասին կոլլեկտիվների կողմից փորձ դիմումի: Գյուղատնտեսական միասնական հարկի խնդրով բոլոր միջոցությունները ու բոլոքները, համաձայն գյուղատնտեսական հարկի մասին յեղած կանոնադրության 64 հոդվածի, տրվում են գավառային և շրջանային գործկոմներին, վորոնք այդ դիմումները պետք և անհապաղ հանձնեն շրջանային և գավառային հարկային հանձնաժողովներին՝ ի քննություն: Վերջիններիս վճիռների դեմ կարելի յե բողոքել ավելի բարձրագույն հարկային հանձնաժողովներին, վորոնց վճիռն արդեն վերջնական են համարվում: Հարկային հանձնաժողովները, պարտավոր են բոլոր բողոքները, նրանց ներկայացրած որից, մի ամսվա ընթացքունել:

Կոլտնտեսությունների արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկությունների վրա տարածվում են այն բոլոր արտոնությունները, վորոնք տարածվում են գյուղատնտեսական կոոպերացիայի ստորին ցանցի վերաբերմամբ:

Ճիշտ նույն կերպով, համաձայն Ցնտխորհի 1927 թ. սեպտեմբերի 29-ի վորոշման, ՌՍՖՍՀ այն կոլտնտեսությունները (կոմմունաներ, արտելներ և ընկերություններ), վորոնք հողի հասարակական մշակումը կիրառում են առանց վարձու բանվորների, նշանակված հարկաքանակի կեսի չափով ազատվում են ապահովագրական վճարումներից, պայմանով, յեթե այս միությունների անդամներն առանձնացած տնտեսություն չունեն: Կոլտնտեսություններին տրված արտոնու-

թյունները 1928–29 թ. զգալի չափով լայնացել են, համեմատած 1927–28 թ. հետ:

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՍՀՄ ԺԿՆ-ի 1928 թ. մարտի 2-ի վորոշման § 18-ում ասված է. «Նկատի առնելով այն հանգամանքը, վոր մանր, անհատական, մանավանդ չքավոր տնտեսություններին դյուղատնտեսական վարկ բաց թողնելն այդ տնտեսությունների բարելավման տեսակետից, բավարար արդյունքներ չի տալիս, և նկատի առնելով կոլեկտիվ հողագործության ընդլայնման անհրաժեշտությունը, առաջարկել, վոր դյուղատնտեսական վարկավորման սիստեմն ուժեղացնի դյուղացիական տնտեսությունների պարզագույն արտադրական միջոցների և կոլեկտիվ տնտեսությունների վարկավորումը»: Այս վորոշումից մենք տեսնում ենք, վոր դյուղատնտեսության դրամական միջոցներ հայթայթելու հետ կապված բոլոր ձեռնարկումներն առաջին հերթին պետք է նպատակն չքավոր ու միջակ դյուղացիական տնտեսության կոլեկտիվացումը:

Կորստաբերությունների հիմնական կապիտալները զարգացնելու նպատակով՝ կենտրոնական և հանրապետական դյուղատնտեսական բանկերին կից կազմվել է հատուկ դրամական ֆոնդ՝ կորստաբերություններին յուրաքանչյուր տարվա վարկ տալու համար: Այս ֆոնդին 1926–27 թվին պետբյուջեից տրված էր 5 միլ. ռուբլի: 1927–28 թվին միության պետբյուջեով այս ֆոնդին՝ 20 միլ. ռուբլի՝ ի հատկացվել կորստաբերությունների համար, վորից 1 միլ. ռուբլին նշանակված է կորստաբերությունների ապրո-ապատարկման:

Այս ֆոնդից տրվող վարկերի համար ժամկետները նշանակված են 5–10 տարի և 4–5 տոկոսով: Գյուղատնտեսական վարկի բնդհանուր միջոցներից մի վորոշ դրամար թողնվում են՝ ըստ վարկի առանձին տեսակների, յուրաքանչյուր շրջանի դյուղատնտեսական կոլեկտիվներին վարկավորելու համար: Այս դրամարի մեծ մասը նույնպես հանդիսանում է յերկարատև վարկ և տրվում

և կրոնական միությունները վոչ քաջալ, քան 7 տոկոս տարեկան: Անցյալ տարի պրոլետարական վարչի սեփականում բաց թողված գումարներից կրոնական միություններին հատկացված եր 15 միլ. ռուբլի, իսկ ընթացիկ 1928 թվին՝ 34,9 միլ. ռուբլի: Ինչպես տեսնում ենք, կրոնական միություններին բաց թողած վարկը մեկ տարվա ընթացքում ավելի քան կրկնապատկվել է:

Վերոհիշյալ բոլոր գումարներից նոր կազմակերպված կրոնական միությունների համար առանձնացված և բաց թողնել վոչ պակաս, քան 10 տոկոս: Բացի սրանից, կրոնական միություններին պետք բաց թողնել կենտրոնական—սեմինարիաների ուսանողների տնտեսությունները վերականգնելու համար պետությունից հատկացված միջոցներից վոչ պակաս, քան 15 տոկոս, վարձավորելու համար թե՛ նոր և թե՛ արդեն գոյություն ունեցող կրոնական միությունները և յերաշտի դեմ պայքարելու համար ԽՍՀՄ պետությունից հատկացրած միջոցներից վոչ պակաս, քան 20 տոկոս՝ յերաշտին յենթակա տեղերում նոր կրոնական միություններ կազմակերպելու համար: Համամիութենական դաշինքի ֆոնդից 20 տոկոսից վոչ պակաս պետք և հատկացվի խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների համար դաշինքի ֆոնդ ստեղծելու: Այդ նպատակի համար բաց թողնված միջոցներից 10 տոկոսը պետք և արվի տեղական ֆոնդի հողերի վրա կազմված կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններին՝ վարելու փոխառություն:

Կրոնական միությունների համար յեղած վարկերի ընդհանուր գումարը՝ բոլոր հոդվածներով՝ այս տարի ԽՍՀՄ-ում հավասար է 67 միլ. ռուբլու: Այս հանգամանքը կրոնական միությունների, կրոնական միությունների միությունների և սեկտանների, նաև հողագործների ու կուլակների միությունների վրա մեծ պատասխանատվություն է դնում, վոր այս միջոցները ճիշտ ու նպատակահարմար կերպով ոգտագործվեն: Պետք է և վոչ մի կերպ թույլ տալ, վոր կրոնական միջոցով այս գումարների թեկուզ մի վարքի մասը ոգ-

տարածվի անհատական սեփականության ուժեղացման համար:

Կոլտնտեսություններին վարկ տրվում է միայն հանրայնացված կապիտալների և արտադրության միջոցների զարգացման ու ամրացման համար: Վարկը տրվում է ինչպես գույքային ապահովագրությամբ, նույնպես և անձնական պատասխանատվությամբ: Անձնական պատասխանատվությամբ վարկավորումը թույլատրվում է միայն այն խմբակների համար, որոնք նյութական ապահովություն չունեն, բայց կազմակերպչորեն միացած են ու աշխատանքին ընդունակ, յերբ կարելի յե հուսալ, որ ստացված վարկը կոգտագործվի հանրայնացված սեփականության համար և նշանակված ժամկետում կվերադարձվի: Կոլտնտեսություններին վարկ համեմատաբար ավելի յեն բաց թողնում և ավելի արտոնյալ պայմաններով, քան ուրիշ փոխառուներին: Սա, ինչպես վերը հիշվեց, պարտավորեցնում է կոլտնտեսություններին՝ ոչ միայն նպատակահարմար կերպով ոգտագործել վարկը, այլև իր ժամանակին վերադարձնել այն, որովհետև վարկ պահանջում են ոչ միայն այն սեփականությունները, որոնք վարկ են ստացել, այլև նրանք, որոնք նոր են կազմակերպվում և դեռ պիտի կազմակերպվեն: Կոլտնտեսության ֆոնդը պետք է լրացվի ոչ միայն պետբյուջեյի լրացուցիչ հատկացումներով, այլև կոլտնտեսությունների ստացած վարկն իր ժամանակին վերադարձնելով:

Յուրաքանչյուր կոլտնտեսություն իրավունք ունի զանազան նպատակների համար վարկ ստանալու, բայց կոլտնտեսության ֆոնդից վարկ տրվում է բացառապես կոլլեկտիվների հիմնական կապիտալներն ուժեղացնելու նպատակով: Իսկ ընդհանրապես վարկ տրվում է զանազան մեքենաներ և ինվենտար գնելու, բրնակության և սեփականական կարիքների համար շինքեր շինելու, արդյունաբերական և ժամանակ ձեռնարկություններ կազմակերպելու և սարքավորելու համար, սերմեր և բանվոր ու պրոդուկտիվ անասուններ ձեռք

բերելու, ելեքտրիֆիկացիայի, մելիորատիվ աշխատանքների, պաղատու և խոտոզի այգիներ ու անկյուններ դցելու համար և այլն:

Կոլտնտեսությունները կարող են վարկավորվել թե՛ անմիջական կերպով՝ գյուղատնտեսական վարկային ընկերություններից և թե՛ վարկային ընկերություններից, իսկ կոլտնտեսության ֆոնդից միջոցներ, վորպես կանոն, տալիս են անմիջական կերպով գյուղատնտեսական վարկային ընկերությունները: Գյուղատնտեսական վարկային ընկերության ընդհանուր միջոցներից վարկավորվում են դլխավորապես խոշոր կոլլեկտիվ տնտեսությունները, իսկ գյուղատնտեսական վարկային ընկերությունների կողմից ավելի մանր կոլտնտեսությունները: Ցուրաքանչյուր գյուղատնտեսական բանկ, գյուղատնտեսական վարկային ընկերություն, գյուղատնտեսական կոոպերացիայի միություն, վորին վարկավորելու իրավունք ու միջոցներ են տրված, իր պրայաններում տեղ պիտի հատկացնի կոլտնտեսությունների վարկավորման համար, վորը և ըստ որենքի պիտի համաձայնեցնել կոլտնտեսությունների միությունների հետ:

ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼ

ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1927 թվի մարտի 16-ի և որենադիր որդանների այլ վորոշումներով կոլտնտեսություններին վերապահված և առաջին հերթին և արտոնյալ պայմաններով ամեն տեսակ գյուղատնտեսական մեքենաներ ստանալու իրավունքը: Տրակտոր իրավունք ունեն ստանալու միայն խորհրդային տնտեսությունները, կոլլեկտիվ տնտեսությունները և ուրիշ արտադրական կոոպերատիվներ, վորոնք կարող են տրակտորն ոգտագործել հասարակական աշխատանքների համար: ԽՍՀՄ Առևտրի ժողկոմատի 1927 թվի դեկտեմբերի 27-ի վորոշման համաձայն՝ 1927-28 թ. գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ ծախելիս՝ կոլտնտեսություններ-

ըի համար մեքենաների և ինվենտարի գնման ժամանակ նախատեսնված է վարկավորման ավելի արտոնյալ աստիճան: Այսպես, որինակ, 12—100 ռ. արժողության գութանները սովորական պայմաններում ծախսում են հետեվյալ կերպով. արժեքի 35 տոկոսի չափով պետի կանխավճար տրվի, առաջին հնձից հետո պետի վճարվի 40 տոկոսը և յերկրորդ հնձից հետո՝ 25 տոկոսը: Կոլտնտեսություններին նույն արժեքի գութանները վարկով տալիս են՝ արժեքի 20 տոկոս կանխավճարով, առաջին հնձից հետո 30 տոկոս վճարումով, յերկրորդ հնձից հետո՝ 30 տոկոս վճարումով և յերրորդ հնձից հետո՝ 30 տոկոս վճարումով: Այսպիսով, նախ կոլտնտեսությունների համար վարկի ժամկետը յերկարացված է մի ամբողջ տարով և յերկրորդ՝ կանխավճարն ու առաջին տարվա վճարումը նվազեցված է, համեմատած սովորական հիմունքներով կատարած վաճառքի հետ: Մի ուրիշ որինակ. խուրձ կապող մեքենան, վոր 2000 ռ. ավելի արժի, սովորական պայմաններով վաճառելիս բաց են թողնում 25 տոկոս կանխավճարով, առաջին հնձից հետո՝ 20 տոկոս վճարումով, յերկրորդից հետո՝ 25 տոկոս վճարումով, յերրորդից հետո՝ 20 տոկոս և չորրորդից հետո՝ 10 տոկոս վճարումով: Իսկ կոլտնտեսությունների համար հաստատված և հետևյալ նորման. կանխավճարը՝ 10 տոկոս, առաջին հնձից հետո վճարումը՝ 20 տոկոս, յերկրորդ հնձից հետո՝ 25 տոկոս, յերրորդ հնձից հետո՝ 25 տոկոս և չորրորդ հնձից հետո՝ 20 տոկոս: Այսպիսով՝ մենք այստեղ էլ տեսնում ենք, վոր կոլտնտեսությունների համար խուրձ կապող մեքենայի կանխավճարը պակաս է, կրճատվում է մեքենայի առաջին տարվա ոգտագործման վճարումը և վճարումը բարձրանում է վերջին տարում, յերբ մեքենան արդեն իր դինը հանել է: Այսպիսով, ուրեմն, կոլտնտեսությունների համար բոլոր տեսակի գյուղատնտեսական մեքենաներ ու ինվենտար ձեռք բերելու համար սահմանված է այդպիսի արտոնյալ կարգ:

ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԱՑԹՈՂՈՒՄԸ

Միութենական կառավարության 1927 թ. մարտի 16-ի վորոշման մեջ ասված է. «Պետական անտառային ֆոնդից ոգտվելու համար կոլտնտեսություններին վերապահել միևնույն արտոնությունները, ինչ վոր տրված են ամենաչքավոր բնակչության: Տեղական նշանակություն ունեցող անտառներից ոգտվելու համար կոլտնտեսություններին վերապահել հողային համայնքների ունեցած միևնույն իրավունքը»: Այս վորոշման համաձայն՝ յուրաքանչյուր կոլտնտեսություն, դաշնակից բոլոր հանրապետություններում, տեղական նշանակություն ունեցող անտառներից իրավունք ունի անտառանյութ ստանալու նույն հիմունքներով, ինչ հիմունքներով վոր ստանում են հողային համայնքները: Կոլտնտեսություններին շինափայտով և վառելափայտով պիտի ապահովեն ամենաչքավոր. բնակչության հետ մեկտեղ: Այս հարցի վերաբերմամբ ՌՍՖՍՀ հողժողկոմատը 1928 թ. փետրվարի 7-ի հողորգաններին առաջարկեց փայտեղեն բաց թողնել կոլտնտեսություններին՝ սկսած 75 տոկոս զեղչից հասցնելով մինչև ձրիաբարի: Բացի դրանից, հողժողկոմատի այդ միևնույն հրահանգով բացի գյուղի չքավոր բնակչությունն ապահովող շինափայտի ֆոնդից, ստեղծվել և կոլտնտեսություններն ապահովող հատուկ անտառային ֆոնդ, ըստ վորում կոլտնտեսություններին իրավունք է տրված ոգտվելու վոչ միայն կոլտնտեսության ֆոնդից, այլ նաև գյուղի չքավորությանը հատկացրած ֆոնդից:

Այսպիսով, փայտեղենով և շինափայտով ապահովելու տեսակետից ել կոլտնտեսություններին ավելի մեծ արտոնություններ են տրված, քան գյուղի մնացած ամբողջ բնակչության:

Փայտեղեն կամ անտառանյութ ստանալու համար դիմումներ պետք է ուղղել մոտակա հողորգանին:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաձայն Սորհրդային իշխանության կենտրոնա-

կան որպանների վերոշման՝ առաջարկված և ավարտել այժմս կազմակերպած բոլոր կոլտնտեսությունների հողաշինարարությունը և ամեն տարի հողաշինարարել նոր կազմվող կոլտնտեսությունները: Հողաշինարարությունը պիտի կատարվի գյուղի ամենաչքավոր բընակչության հողաշինարարական աշխատանքների համար պետբյուջեյով բաց թողնված միջոցներով: Հեռացված և նաև հողային համայնքներից հեռացող և տնտեսության կոլեկտիվ ձևերին անցնող անձանց հողամասերի զատումը:

Վորպեսզի կոլտնտեսությունները հողաշինարարությունն իր ժամանակին կատարեն, յուրաքանչյուր կոլտնտեսություն նախորոք պետք և համապատասխան դիմում ներկայացնի հողային վարչությանը:

Պետք և մատնանշել, վոր կոլտնտեսությունների հողաշինարարություն ասելով չպիտի հասկանալ միայն կոլտնտեսությունների հողամասերի սահմաններն ընդարձակելը, այլ նաև ներքին հողաշինարարություն: Ներքին հողաշինարարության մեջ մտնում են թե՛ վարելահողերի բարելավումը և թե՛ հողամասերը դաշտերի բաժանելը, կոլեկտիվների տնտեսության կազմակերպչական պլանների համապատասխան: Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ հողաշինարարական աշխատանքներ կատարելիս պետք և մատնանշեն վոչ միայն հողաչափը, այլ նաև գյուղատնտեսը, հարկը պահանջածին՝ նաև մելիորատոր և ուրիշ մասնագետներ:

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղական վայրերում 1928–29 թ. պարտադիր կոպարային ապահովագրության վերաբերյալ արտոնություններ վերապահելու մասին ՌՍՖՍՀ Տնտխորհի 1928 թ. սեպտ. 22-ի հաստատած հրահանգի համաձայն՝ կոլտնտեսություններին վերապահվում են հետևյալ արտոնությունները.—

Գյուղատնտեսական կոմունաներից և արտելներից

ապահովագրական վճարումներից լիովին ազատվում են այն կոլտնտեսությունները, որոնք 1928–29 թ. ազատվել են գյուղմիասհարկից՝ յեկամուտների մինիմումը հարկից ազատ լինելու հատկանշով:

Այն գյուղատնտեսական արտելներն ու գյուղատնտեսական կոմմունաները, որոնց գյուղմիասհարկը 1928–29 թվի 60 տոկոս և 40 տոկոս զեղչված են, ապահովագրական վճարումները մուծելիս միևնույն զեղչն են ստանում:

Վարձու բանվորական ույժ չկիրառող հողի հասարակական մշակման ընկերությունների ապահովագրության վճարումները զեղչվում են մեկ յերրորդի չափով, բայց որում վարձու աշխատավոր չեն համարվում նրանք, որոնց աշխատանքը ժամանակավոր ոժանդակող բնույթ ունի. նաև գրասենյակային, կոլտնտեսաշխատավորները, նաև բոլոր մասնագետները ու տեխնիկները:

ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ-ի 1927 թ. մարտի 16-ի որոշման և ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1928 թ. մարտի 2 որոշման համաձայն՝ առաջարկվում է դաշնակից հանրապետությունների ժողկոմխորհներին և լուսժողկոմատներին «գյուղական դպրոցներում և մանավանդ գյուղական յերիտասարդության դպրոցներում ուսումնասիրել խոշոր կոլլեկտիվ հողագործության առավելությունները՝ մանր անհատական տնտեսությունների հանդեպ, ապահովելով դպրոցներն անհրաժեշտ դասագրքերով»: «Մի քանի դեռ առնել, որպեսզի գյուղատնտեսական բարձրագույն կրթական հիմնարկներում և գիտական-հետազոտող ինստիտուտներում ավելի մեծ ուշադրություն դարձվի խոշոր հողագործության արտադրության կազմակերպման ուսումնասիրության վրա, ընդհանրապես, և կոլտնտեսություններին՝ մասնավորապես»: Առաջարկվում է նաև ուժեղացնել քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կոլտնտեսություններում»:

Վերոհիշյալի հիման վրա բոլոր գյուղատնտեսական դպրոցների՝ բարձրագույն, միջին և ստորին՝ ծրագրում պետք է անպայման մտցնել կոլտնտեսությունների շինարարությունն ուսումնասիրող հարցերը: Լուսավորության որգանները նույնպես պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն, վորպեսզի կոլտնտեսություններում առաջին հերթին վերացվի տեխնիկական անպրպիտությունը և սիստեմատիկ կերպով քաղլուսավորական աշխատանք տարվի: Անհրաժեշտ է գյուղատնտեսական կոլլեկտիվների անդամներին համապատասխան կերպով պատրաստելու համար, նրանց առաջ քաշել, տեղավորելով գյուղատնտեսական դպրոցներում՝ թե՛ ստորին, միջին և թե՛ բարձրագույն: Իրենք, կոլտնտեսությունները նույնպես պետք է ավելի ինքնագործունեություն ու նախաձեռնություն հայտաբերեն՝ իրենց կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում, կազմակերպելով ամեն տեսակ խմբակներ, կուրսեր, դրաղարաններ, ներկայացումներ և այլն՝ բանվորական ուժի վորակավորումը դարձնելով առաջնակարգ խնդիր:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿՆ-ի 1927թ. մարտի 16-ի վորոշման համաձայն՝ կոլտնտեսություններին «ձրիաբար հանձնվում են բոլոր արդյունաբերական ու ոժանդակ ձեռնարկությունները, վորոնք գտնվում են նրանց տերրիտորիայի վրա» և որենքով ապահովվում են «կոլտնտեսությունների հետ կապված և նրանց հարևան տերրիտորիայի վրա գտնվող արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկությունները կոլտնտեսություններին հանձնելու արտոնյալ պայմանները»: Բացի դրանից 1927 թ. ընթացքում կոլտնտեսություններին է հանձնված (իսկ վորտեղ դեռ չի հանձնվել, 1928 թ. պետք է հանձնվի), «ձրիաբար ոգտագործելու և ազատ կերպով տնօրինելու համար, վորպես անրաժանելի կապիտալ, պետական որգաններից ստացած գույքը՝ ինվենտարը, շենքը և այլն»: Կոլտնտեսություններին զեղչվում է վերոհիշյալ

կապիտալից մնացած պարտքերը, պետությունների հետ կապված պարտքերը և դրամական տույժերը: Նաև մշտական աշխատավորական ոգտագործման համար կոլլեկտիվ տնտեսություններին են հանձված պետհողդությունում յեղած բոլոր հողերը, վորոնցից կոլտնտեսությունները փաստորեն ոգտվում եյին, բայց առանց այդ հողերը մասերի բաժանելու իրավունքի. զեղչվում են մատնանշված հողամասերի համար կապալավարձի վճարման վերաբերյալ պարտքը և պարտքի համար յեղած տույժը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Կոմունիստական կուսակցության, Խորհրդային իշխանության և կոոպերացիայի բոլոր միջոցները, վորոնց մասին խոսվեց այս գրքույկում, հեշտացնում են չքավոր և միջակ անհատական տնտեսությունների փոխանցումը կոլլեկտիվ տնտեսության և ավելի բարենպաստ պայմաններ ստեղծում՝ բոլոր կոլտնտեսությունների կազմակերպման, տնտեսապես ուժեղացման և աճման համար: Բայց միաժամանակ այս բոլորը մեծ պատասխանատվություն ու մեծ պարտականություններ են դնում կոլտնտեսությունների վրա: Կոլտնտեսությունները վոչ թե խոսքով, այլ գործով, կենդանի որինակով պիտի ցույց տան գյուղի չքավոր ու միջակ ստրատներին, թե նրանց կենցաղային պայմանների բարելավման և կուլտուրական աճման գլխավոր ուղին՝ դա կոլտնտեսություններում միանալու ճանապարհն է: Անտնտեսավարությունը, թափթփածությունը, վոր ներկայումս հաճախ նկատելի յեն կոլտնտեսություններում, այլևս չպիտի լինեն: Վոչ մի կոլտնտեսություն չպետք է առարկի, թե չգիտե իր իրավունքներն ու իր վրա դրած պարտականությունները բանվորագյուղացիական հասարակայնության հանդեպ: Կոլտնտեսությունները չպետք և առարկեն, թե չգիտեն տնտեսություն վարել, քանի վոր նրանց տրված են բոլոր հնարավորությունները՝ այդ բանը սովորելու համար:

Ցուրաքանչյուր կոլտնտեսություն, ձգտելով հան-

բայնացված անտեսության շահավետության որինակ դառնալ շրջապատի անհատական անտեսությունների համար, պետք է միաժամանակ ոգնի անհատական անտեսություններին, միանալու ամեն տեսակի արտադրական կոոպերատիվներին և կոլտնտեսություններին, գանազան տեղեկություններ և համապատասխան տնտեսական ոգնություն ցույց տալով նրանց և այլն: Յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է ունենա ամեն տեսակի տեղեկանքներ, ինչպես են՝ կանոնագրությունը, ներքին կարգապահություն, հրահանգներ, որենքներ և այն ամենը, ինչի մասին անհրաժեշտ է իմանալ կոլտնտեսության մեջ միացողների համար:

Կոլտնտեսությունների միությունները ու սեկցիաները նույնպես պետք է ամեն միջոց ձեռք առնեն՝ կոլտնտեսությունների շինարարության մեջ ճիշտ ղեկավարություն հաստատելու համար: Համապատասխան ոչխատավորների համապատասխան կադրեր պիտի նշանակել այն անձանց, որոնք գործնականում անցել են կոլտնտեսությունների շինարարության դպրոցը, որպես ավելի մեծ հնարավորություն կտա ոգտվելու փորձից, հետևապես և գնահատելու կոլլեկտիվների պլանային շինարարությունը:

Գյուղատնտեսական կոոպերացիայի միությունների և հողորգանների հողաշինարարության վերաբերյալ բոլոր միջոցները՝ ագրոնոմիական ձեռնարկումները, խորհրդային տնտեսությունների, փորձնական կայանների և շրջանային ագրոնոմիայի աշխատանքը այս բոլորը պետք է անմիջական կերպով կապված լինեն արտադրական կոոպերացման ու կոլլեկտիվացման միջոցների հետ: Սրանից հետո վոչ մի հողորգանում կամ գյուղատնտեսական կոոպերացիայի միության մեջ խոշոր կոլլեկտիվ տնտեսության համար մղված պայքարում չեզոքություն չպետք է լինի: Այս է պահանջում մեր կոլլեկտիվ առաջնորդը՝ Համամիութենական Կոմունիստական Կուսակցությունը և այս պետք է իրագործեն հողային և կոոպերատիվ որգաններն իրենց ամենորյա աշխատանքում:

ՀՍՍՀ Գ.Ա.Ա. ԸՆԴՐ. ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿՍԵՊՏԻՐԱԼ

23. Ս. Լուկաչին.—*Անդրկովկասի անասնական դրությունը* (*ապատված*) 15

24. Հրանուշ Հայաստանի և Ս. Հանրապետության անտառներից փայտեղեն բաց թողնելու համար (*պաշտոնական*) .

25. Պրոֆ. Ավ. Գալանթար.—*Կոմունաստ կոմի կերակր* (*ապատված*) 30

26. Ա. Ա. Տրիֆոնով.—*Ինչու պետք է ցեղը չուտ անել* . . 15

27. Ա. Գակուցց.—*Գալուստի վիկը* (*ապրս-պատմվածք*) . . 15

28. Ա. Բակուցց.—*Կարտոֆիլի մշակություն* (*ապատված*) . . 20

29. Լ. Սուրոտին.—*Կոմի գաղը* (*ապրս-պիեսա*) 20

30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—*Տիգիանքի* (*ապատված*) . . 5

31. Խս. Տեր-Ներսիսյան.—*Գանգատու ծառերի վնասատուներն ու հիվանդությունները* (*ապատված*) 25

32. Աբազի.—*Տրակտոր* (*ապրս-պատմվածք*) 15

33. Ցալտացի.—*Քարհրդավոր սրտաճնշներ* (*ապրս-պրոլոգ*) . . 15

34. Նինկո-ապեր.—*Գյուղատնտ-անասնաբուծությունը և իր ապրս-դրությունը* 20

35. Ս. Ցրիդոլին.—*Տեսք պատգամ անասնապահին* (*բ. ապատ.*) 20

36. Մ. Խանզադյան.—*Մեղվաբուծության գործնական ձեռնարկ* (*ապատված*) 60

37. Աբրամայիս Ցերգինյան.—*Մեր գյուղատնտեսության հերթական խնդիրները* (*ապատված*) 40

38. Ա. Աբանասյան.—*Գուբա՞ն, թե՞ ապրս* (*ապատված*) . . 10

39. Վ. Բոյկով.—*Լիքն ապրատ կոմն և* (*ապատված*) . . . 20

40. Խս. Տեր-Ներսիսյան.—*Գոմաղբը* 20

41. Ի. Կուզնեցով.—*Լենինը և գյուղացիությունը* 30

42. Ա. Մուշեղյան.—*Անասնը պետք է հաշվով կարել* . . . 5

43. Խս. Տեր-Ներսիսյան.—*Ինչպես պատվաստել պտղատու ծառերը* 10

44. Ա. Բակուցց.—*Խառաչուրի կոմունան* 30

45. Հ. Ազատյան.—*Ցեղապաշտից դեպի սոցիալիզմ՝ կոսմոպոլիտիզմի վրայով* . . . . . 1 ռ. 50

46. Վ. Միխայլով.—*Տավարի վարակիչ հիվանդությունները* . 5

47. Մ. Թումանյան.—*Վիկ* 25

48. Գ. Գալանթարյան.—*Գոմաղբ* 5

49. Նոյեմբերի ճանապարհին (*Ժողգ.*) (*ապատված*) 20

50. Պրոֆ. Ավ. Գալանթար.—*Կաթնատու կոմի բնությունը և նախիրի ապնվացումը* 20

51. Հրանուշ Գյուղատնտ. կոոպ. ընկերության [illegible] կարգի մասին (*Հավ. «Գյուղ. կյանքի»-ի*) .

52. Հանձ. հողագործության և հողաշինարարության [illegible] . . . . . .

53. Հ. Փիրումյան.—*Հողմեղիմքատ 1927–28 [illegible] թյուն* . . . . . .

54. Ա. Աբանասյան.—*Դեպի բերքի [illegible]* [illegible]

55. Վ. Գորբունովի.—*Զիլերի արհեստ. բնդմնավորումը* . . 20

56. Ա. Վերմիշյան.—*Պատատ-ացին ու նրա խնամքը* . . . 45

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003758

[224.]

II
A 23260

ԳԻՆԸ 30 ԿՊԿ. ($4^1/_2$ մանուլ)

57. Ա. Մարգարյան.—*Վոչխարաբուծություն* 50
58. Ա. Ա. և Ա. Թ.—*Բանջարաբուծություն* 20
59. Ա. Ցերզիլյան.—*ԱՍՖԽ՝ անասնապահությունը և դյուզատնտ. ինգուսարացումը* 25
60. ՀԱՄԿ(Բ)Կ վորոշումը բամբակագործության մասին
61. Ա. Աբանասյան.—*Բերքի և կոլեկտիվացման ուղը*
62. Կալտնտես. շինարարությունը ԱՍՖԽ-ում
63. Ա. Ալանյան.—*Մեզվարության ուղեցույցը* 80
64. Կանոնադր. մեքենատրակտորային կայանների արտադրական միավորումների
65. ՀՍԽՀ ամտառաշխ. Համառեայատ. 3-րդ եռամսյակի բանաձևերը
66. Կ. Մ.—Շահնազարյան.— *Գարնանացան ցորենի մշակությունը* 3
67. Գ. Հարությունյան.—*Դարաղը* 3
68. Տ. Քալանթար.—*Ցեղջ. անասուն. ծանոթախոտը* 3
69. Ս. Գոնդարյան.—*Առաջին օգնությունը անասուններին և թռչուններին* 3
70. Հ. Փիրումյան.—*Խոտաբույսերը և նրանց մշակության յեղանակները (բ. տպագր.)* 5
71. Կ. Մ.—Շահնազարյան.—*Ինչպես վոչնչացնել մրիկը* . . . 3
72. Շ. Ավագյան.—*Ճանրաչրջանառությունը և նրա նշանակությունը* 3
73. Ն. Տրոյիցկի.—*Մարգագետինների բարելավումը և նրանց խնամքը* 4
74. Գյուղատնտ. արտադրական խորհրդակ. դերն ու նշանակ. գյուղատնտ. գարգացման գործում
75. Ս. Խաչիկյան.—*Ինչու մեր կաթնատու տավարը քիչ արդյունավետ է* 4
76. Շ. Ավագյան.—*Սերմի գտումն ու նրա նշանակությունը* . 3
77. Գ. Գրիգորյան.—*Հավերի ընտրությունը, խնամքն ու կերակրելը* 3
78. Հ. Փիրումյան.—*Շարքահերկ բույսեր* 4
79. Գ. Քալանթարյան.—*Մալախոտերը և պայքար նրանց դեմ* 4
80. Վ. Ղարիբյան.—*Բամբակի ցանքը և նրա խնամքը* . . . 3
81. Խ. Տեր-Ներսիսյան.—*Գուլա՞ն, թե՞ արոր* 4
82. Գ. Թումանյան.—*Ինչպես մշակել հողը բամբակի համար* 4

ԳԻՄԵԼ՝ Ցերիան, Հողժողկոմատ՝ Հրատարակչության, «Հայգրքի» կենտրոնական և գավառական գրախանութներին: